

ՄՈՍԿՈՒՄ, 27 (ՌՈՅԹԸՐՁ).- Ռուսիայի ներքին գործոց փոխ նախարարը, ինչպես նաև ռուսական ոստիկանության 13 բարձրաստիճանի պաշտոնատարները Կոնգրեսի ուղղաթիռի մը շախմատահամարում, հարդորեց երկ կրեմլին: Ուղղաթիռը, որ շախմատահամարում 2Ե, Ենիոյ մէջ, կը փոխադրէր ռուս բարձրաստիճանի փոխնախարարի պաշտոնատարները, որոնց շարքին՝ Միխայիլ Ռուսլանովը, որ հարաւային Ռուսիայի մէջ ապահովութիւն հաստատելու գործընթացին մէջ նպաստ բերած էր, յայտնեց կրեմլինի մէջ պաշտոնատարը: «Պայթումին ճշգրիտ պատճառը տակաւին յստակ չէ», ըսաւ 2Ե, Ենիոյ Համադաշնակցային Ապահովութեան Գրութեան պատասխանատու Վոր. Սերկէյ Պապրին, «Ինքըրֆաթ» լրատու գործակալութեան, սակայն, միւս կողմէ, ռուս ալ պաշտոնատարներ շեշտած են, որ «Մի. 8» ուղղաթիռը օդին մէջ պայթած է եւ պայթումը նկատած են չեչէն անջատողականներու կողմէ կատարուած հրթիռային ահաբեկչական գործողութիւն:

ԷԼԻ ՀՐԳԵՅՔԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԶԵՐԲԱԿԱԼԵԱՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԲԱՐՉՐԱՅԱԻ ՀԻՆԳԻ

Նախկին նախարար եւ երեսփոխան Էլիաս Հրպէյքայի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Շաբաթ օր, մասնակցութեամբ պետական եւ քաղաքական անձնաւորութիւններու եւ հոծ բազմութեան մը:

Մինչ այդ շարունակուեցաւ Հրպէյքայի սպանութեան հետաքննութիւնը. լրատու աղբիւրներ երկ հաղորդեցին, որ հարցաքննութեան համար ձերբակալուածներու թիւը հասած է հինգի:

Շաբաթ օր, ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուն հաստատած էր, որ հարցաքննութիւնը համար արգելափակուած է երեք հոգի: Դատական աղբիւրներ յայտնեցին, որ անոնցմէ մէկն է ակնուիշակ ինքնաշարժի նախկին սեփականատէրը, ինչպէս նաև ինքնաշարժը ծախած միջնորդը, որ ծախու է գործածուած ինքնաշարժներու ցուցասրահի մը տէրն է:

«Տրանս Օրէս» լրատու գործակալութիւնը Շաբաթ օր հաղորդեց, որ ինքնաշարժը ներածուած էր ապօրինի ձեւով, վայն գնած է սալուացի վաճառական մը, որ ապա ծախու հանած է ժեպպիսի մէջ, ուր ծախած է երկու անձանց: Նորոք գործածած են կեղծ անուններ:

Ատտուն յայտնեց, որ հետաքննութիւնը կեդրոնացած է ինքնաշարժը գնած անձին ինքնութեան բացայայտումին վրայ, որ լոյս պիտի սփռէ ամբողջ հարցին վրայ:

ՅՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Հրպէյքայի եւ անոր թիկնապահներուն՝ Ֆարիս Սուէյտանի եւ Ուալիտ Զէյնի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Շաբաթ օր, Հապիսի Մար աքլա եկեղեցիին մէջ:

Ներկայ էին հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ նախարար Միշէլ Մուսա, որ նախագահին անունով հանձնարարեց իր անձնական զենքը, ինչպէս նաև Սուրիոյ նախագահ Պաշտաբ Սասուի ներկայացուցիչ Վոր. Վալի Քասան, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիի ներկայացուցիչ երեսփոխան Ապպաա Հաշմ, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ նախարար Ասատ Տիապ, նախկին նախագահ Էլիաս Հըրաուի, նախարարներ, երեսփոխաններ, համայնքապետեր, պետական, քաղաքական, կուսակցական եւ կրօնական անձնաւորութիւններ ու պատկերասրահներ, ինչպէս նաև հոծ բազմութիւն մը:

Արարողութեան հանդիսապետեց մարոնիներու Սֆէյր պատրիարքի ներկայացուցիչ առաջնորդ Ռոյան Ապու Փաուտէն, որ Սֆէյր պատրիարքին անունով դատապարտեց պատերազմի ցաւալի էջերը յիշեցուցած արարքը:

«Սովորական անձ մը չէր Հրպէյքա, որ պատերազմի օրերուն տէր կանգնեցաւ դժբախտ պայմաններու քերամբ իր ստանձնած պարտականութիւններուն, իսկ խաղաղութեան հաստատումէն ետք փոխած էր իր ուղղութիւնը», ըսաւ ան, յիշեցնելով հանգուցեալին քաղաքական եւ բարեսիրական գործունէութիւնները:

Արարողութեան ւարտին նախարար Մուսա նախագահ Լահուտի անունով շքանշանը պետեղեց Հրպէյքայի դագաղին վրայ, վեր առնելով Լիբանանի համար անոր Կոնգրեսիանները:

Ուսանողութեան անունով արտասանուած խօսքը յիշեցուց, որ Հրպէյքա Լիբանանի խաղաղութեան համար Թաէֆէն տարին նոր առաջ փորձեց եռակողմանի համաձայնագիրով կանխարգիլել Թաէֆի համաձայնագիրը կանխած արիւնահեղութիւնները, եւ նախատակուած է Արիէլ Շարոնի ճշմարիտ դիմագիծը բացայայտելու անվախ յանձնառութեան պատճառով:

Այնուհետեւ, Հրպէյքայի դագաղը փոխադրուեցաւ Պիքաթաթա եւ հողին յանձնուեցաւ անոր ընտանեկան դամբարանին մէջ:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկ ցաւակցութիւն յայտնելու համար Հրպէյքայի ընտանիքին այցելեցին նախագահ Վոր. Էմիլ Լահուտ, նախկին նախագահ Էլիաս Հըրաուի, խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, նախկին վարչապետներ Սեյիմ Հըր եւ Ռաշիտ Սոյի, ինչպէս նաև երեսփոխաններ, բանակի հրամանատար Վոր. Միշէլ Սլէյման, նախկին նախարարներ եւ երեսփոխաններ, քաղաքական, կուսակցական եւ ժողովրդային պատմաբանութիւններ եւ անձնաւորութիւններ:

ՊԱՂԵՍՏԻՆԵՑԻ ԿԻՆ ՄԸ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՏԱՐԵՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՁ ՄԷԿ ՁՈՂ ԵՒ ԱԻԷԼԻ ՔԱՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՎԻՐԱՒՈՐ



Ոստիկանութիւնը կը բնակեցնէ պաղեստինցի քամիքազից դիակը:

Պաղեստինեան անձնասպանական գործողութիւն մը մէկ գոհ եւ աւելի քան քառասուն վիրաւորներ պատճառեց Երուսաղէմի մէջ: Քանի մը օրուան ընթացքին երբուրդ գործողութիւնն էր, որ տեղի կ'ունենայ իսրայէլեան քաղաքներու մէջ:

Երուսաղէմի ճաֆա պողոտային վրայ տեղի ունեցած գործողութիւնը նախատեսել կուտայ իսրայէլեան զօրաւոր հակադարձութիւն մը: Կը նախատեսուի նաև, որ թափ ստանան իսրայէլեան ու ամերիկեան ճնշումները պաղեստինեան իշխանութեան նախագահ Նաալը Արաֆատի վրայ, որպէսզի սանձէ նման յարձակումներ կազմակերպող ծայրայեղականները:

Ոստիկանութեան մէկ բանբերը յայտնեց, որ երկու դիակ գտնուած է: Կ'ենթադրուի, որ կենդանի պահուած անձնասպանական գործողութիւնը կատարողին է: Նախնական յայտարարութիւններուն մէջ ռատիկանութիւնը յայտնած էր, որ միայն մէկ դիակ կայ, այդպէս զինեալներն է եւ թէ տասնեակ մը անցորդներ վիրաւորուած են: Պաղեստինեան որեւէ կազմակերպութիւն չստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը:

Առաջին անգամ է ինքիֆատայի ազգանշանն ի վեր, որ կին մը կը դիմէ անձնասպանական գործողութեան: Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Զէյնի երէկ ըսաւ, որ Միջին Արեւելքի ամերիկացի յատուկ պատուիրակ Անթոնի Զինի շրջան պիտի չվերադառնայ, այնքան ատեն որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Նաալը Արաֆատ աւելի ճիշդ չընէր վարչապետութիւնը կասեցնելու համար: Ան դատապարտեց երկուսուան անձնասպանութիւնը:

Շաբ.ը՝ էջ 10

ԱՖՐԱՆՍԱՆ

ՀԱՄԻՏ ՔԱՐՉԱՅ ՄԵԿՆԵՑԱԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարչայ երէկ գիշեր Ռաշինկթըն հասաւ նախագահ Ճորճ Պուշին հետ այսօր անկիւնադարձային տեսակցութեան մը համար, մինչ ամերիկեան ուժերը, որոնք կը շարունակեն «Քալիտա»-ի եւ թալիբան պանզերներ հայածել, իրենց Պաք շրջանին մէջ վաշակատուներու վրաններ խուզարկած են:

Սակայն, մինչ քանի որ երկիրը կ'ուղղուի ղեկավար կայունացում, ցեղասպանութեան կարգ մը ղեկավարներ հարցակայնի կողմէ նշանակուած խորհուրդին կազմը, ըսելով, որ անոր աքսորի մէջ ապրող կարգ մը անկախութեան տեղեկներն իրենց ժողովուրդին կարիքներուն մասին:

Մինչ այդ, Ռաշինկթընի մէջ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը արտասայտուելով Քուլարայի Կուսակցական մարտիկական խորհրդին մէջ արգելափակուած թալիբան եւ «Քալիտա»-ի 158 անդամներուն հանդէպ որդեգրուած վերաբերմունքին մասին, կոչ ուղղած է նախագահ Պուշին, որ վերադարձնէ երկրի կառավարութեան

զանոնք պատերազմի գերիներ չնկատելու որոշումը: Անոնք ներկայիս «Ապօրինի կուսակցութիւն» կը նկատուին:

Մ. Նահանգներ մարդկային իրաւանք խմբակներու եւ երկրին ու արտասահմանի մէջ քաղաքական կարգ մը անձնաւորութիւններու կողմէ ամբաստանուած են բանտարկեալներուն հանդէպ անմարդկային վերաբերմունքը ցուցաբերելու յանցանքով: Ռաշինկթըն կը հերքէ ատիկան:

Միւս կողմէ, Աֆղանիստանի նախկին թագաւորը՝ Զահիր Շահ, մօտ ատենէն վերջ պիտի տայ 28 տարուան իր քարտին եւ ըստ իր տղուն, Մարտ 21-ի աֆղան նոր տարիէն առաջ իր երկիրը պիտի վերադառնայ:

Միւրուայ Շահ յայտնած է, թէ Քարչայ իտալիա պիտի մեկնի՝ ընկերակցելու համար նախկին թագաւորին, որ Հոռոմի մէջ ապրած է 1973էն ի վեր, երբ առանց արիւնահոսութեան պետական հարուածի մը պատճառով իր գահը կորսնցուցած էր:

Ինչ կը վերաբերի ՄԱԿի կողմէ նշանակուած 21 անդամնոց խորհուրդին, որ առաջին քայլերը պիտի առնէ ղեկի ընտրուած կառավարութեան

մը կազմութիւնը, Քարչայ գայն իբրեւ անկողմնակալ նկարագրած է, սակայն անոր անդամները մեծ մասամբ անձանց են:

ԻՐԱՆ ԱՖՐԱՆՍԱՆԻ ԸՆԿՐՈՒՄ Կ'ԸՍԵ ԱՆԱՆ

Միւս կողմէ, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան Շաբաթ օր մերժած է ընդունել յետթալիբան Աֆղանիստանի մէջ իրանեան միջամտութեան մասին տեղեկութիւնները: Ան գովասանքով արտասայտուած է Աֆղանիստանի վերակառուցման օժանդակելու համար թեւորակութեան մասին:

Անան, որ միջոցաւ այցելութեան մը համար իրան կ'այցելէր, յայտնած է, թէ այն տեղեկութիւնները, ըստ որոնց՝ իրան ապաստան տուած է «Քալիտա»-ի զինեալներու, ինչպէս կ'ըսեն Մ. Նահանգներ, չեն համընկնիր իրանի յայտարարած քաղաքականութեան հետ:

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ ինարազի նման տեղեկաւորութիւնները:

Շաբ.ը՝ էջ 10

ԵՈՐՑ ՊՈՒՇ ԱՌԿԱԽԵՑ ԹԻՒ 907 ՅՕԴՈՒՄԸ

Սպիտակ Տան բարձրաստիճանի պաշտօնատարներ յայտարարեցին, որ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշին 8 օրուան ընթացքին մէջ կատարուած էր 907 Յօդուածը, որ կ'արգիլէր ամերիկեան ուղղակի օժանդակութիւնները Ազգայնական Սեպտեմբեր 11-ի ղեկավարները Միացեալ Նահանգներու Քոնկրէսը յատուկ իրաւասութիւն տուած էր նախագահ Պուշին՝ առկայելու նշեալ պատժախնայքը, որ Ազգայնական ղեմ հաստատուած էր 1992ին, Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը շրջափակումի ենթարկելու պատճառով:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան Եւրոպայի եւ Եւրասիոյ բաժանմունքին պատասխանատու Ուիլիամ Թէյլըր Պաքուի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ 2002ի ընթացքին Ազգայնականի տրամադրութիւնը ամերիկեան օժանդակութիւնը պիտի հասնի 50 միլիոն տոլարի, որ անցեալ տարուան գումարէն 10 միլիոն տոլար աւելի է: «Ազատութեան Զօրակցութեան Օրէնքի թիւ 907 Յօդուածի առկայութեան առիթով եւ տայ ամերիկեան յաւելեալ օժանդակութիւն տրամադրելու Ազգայնականի կառավարութեան», ըսաւ Թէյլըր, աւելցնելով, որ օժանդակութիւնը պիտի յատկացուի տնտեսութեան մարզին, աղքատութեան նուազեցման, օրինապահ կառուցման, քաղաքացիական թմրեցուցիչի եւ ռճիրի ղեմ պայքարի եւ Ազգայնականի սահմաններու ամրացման համար: Ան նաև յայտնեց, որ օժանդակութիւններու ծրագիրը Հաւանաբար ներառնէ նաև զինուորական մարզը: Պատասխանելով հարցումի մը, Թէյլըր ըսաւ, որ տեղեկ չէ կովկասի մէջ ՕԹԱՆԻ զինուորական խարխիսներու հաստատման որեւէ ծրագրի մասին:

ԱԼԻԵՒ ԱԻԱՐՏԵՅ ՌՈՒՍԻԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ


Ազգայնականի նախագահ Հայտար Ալիեւ Ռուսիա կատարած իր պաշտօնական եւ օրոքայ այցելութեան աւարտին, Շաբաթ օր Մոսկուայի մէջ տուաւ մամուլի ասուլիս մը: Ալիեւ յայտարարեց, թէ ռուս - ազերիական բանակցութիւններուն ընթացքին յառաջնորդ արձանագրուած է Կասպից ծովու ուժանիւթի եւ բնական պահեստներու բաժանման հարցին գծով:

Ալիեւ յայտնեց, որ բանակցութիւններու ընթացքին յատկացուած է Կասպիցի մէջ Ազգայնականի եւ Ռուսիոյ սահմանը: Նախապէս նման համաձայնութիւն մը կնքած էին Ռուսիա եւ Ղազախստան: Ալիեւ նշեց, որ Մոսկուա եւ Պաքու բանակցութիւններու սկսած են թուրքմենիստանի հետ, Կասպից ծովու կարգավեցակի եւ գայն եզերող հինգ երկիրներու Ռուսիոյ, Իրանի, Ղազախստանի, Թուրքմենիստանի եւ Ազգայնականի միջեւ սահմանագծումի անլոյծ հարցերուն լուծում մը գտնելու համար: «Հակառակ անոր որ Ռուսիա, Ղազախստան եւ Ազգայնական գրեթէ համաձայնած են Կասպից ծովու առնչուող հարցերուն

Շաբ.ը՝ էջ 10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱԻԱԽՔ



«Ազգակ»ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

●Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Որֆայլեան եւ Կոմիտաս:

●Բովանդակութիւնը տեսնել՝ էջ 2:

Գին՝ 15.000 Լ.Ո.

Շաբ.ը՝ էջ 10

ՔՐՏԵՐԷՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

ԿԸՍԷ ԷՃԵՏԻԹ

Թուրքիոյ վարչապետ Պիլիկոս Էճեթիմ շարաթա- վերջին յայտնած է, թէ քրտերէն կրթութիւնը «անըն- դունելի է» եւ թէ քրտերէնը իր քաղաքական դասարանե- րուն հասցնելու նպատակով տարուող արշաւ մը կը նպատակադրէ երկրին միասնականութիւնը մաշեցը- նել:

Եւրոպական Միութիւնը, որուն Թուրքիա կ'ուզէ անդամակցել, կոչ ուղղած է Անգարայի, որ երկրին 12 միլիոն քիւրտերուն քաղաքային ազատութիւնները ընդարձակէ, սակայն իշխանութիւնները ունին այն մտաւարկութիւնը, թէ մշակութային աւելի լայ- նածիր իրաւունքներ կրնան մղել քիւրտերը յաւելեալ ինքնավարութիւն պահանջելու:

Այս ամիս ոստիկանութիւնը ձերբակալած է աւելի քան 100 ուսանողներ եւ գործօն քայլերու դիմող պահանջատէրներ, որոնք ստորագրած են աղերսա- գիրներ, կոչ ուղղելով, որ դպրոցներուն մէջ քրտե- րէն դասաւանդուի:

Էճեթիմ պատկերասփիւռի «Սի. Է. Է. Թուրք» կայանին կատարած մէկ հարցազրոյցին ընթացքին յայտնած է, թէ քրտերէն կրթութիւնը «անկարելիու- թիւն մըն է»:

«Այս արշաւը եւրոպական կարգ մը երկիրներու հետ կապեր ունեցող կարգ մը շրջանակներու հրա- հանգով տեղի կ'ունենայ եւ անոնք կ'աշխատին երի- տասարդներ եւ երեխաներ օգտագործել՝ Թուրքիան բաժնելու համար», ըսած է ան:

«Անոնք չեն կրնար բացայայտօրէն արտայայտել անընտրական այս ընթացքը, սակայն դանդաղօրէն այդ ճամբով կը քայլեն», ըսած է ան:

Թուրքիա Հոկտեմբերին իր սահմանադրութիւնը բարեփոխած էր՝ Ե. Միութեան քաղաքական չափա- նիշներուն հասնելու համար եւ վերջ տուած քրտերէն սփռումներուն եւ հրատարակութիւններուն դէմ ար- գելելին:

Իշխանութիւնները կ'ըսեն, թէ անընտրական ՔԱ- կը կը կանգնի քրտերէն կրթութեան ի նպաստ արշա- լին ետին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹԱՐԷՔ ԱԶԻԶ ՄԵԿՆԵՅԱԻ ԶԻՆԱՍՏԱՆ

ՊէժձիՆԿ, 27 (ՌՅԹԸՐԸ).— Իրաքի փոխ վարչա- պետ Թարէք Ազիզ Կիրակի օր Զինաստան ժամանեց, տեսակցութիւններ ունենալու համար չին պաշտօնա- տարներու հետ, հաղորդեց «Կզիճիճու» լրատու գոր- ծակալուծութիւնը:

Ազիզի այցելութիւնը տեղի կ'ունենայ այն պա- հուն, երբ Միացեալ Նահանգներ կը սպառնան զին- ւորական գործողութեան մը դիմել Իրաքի դէմ, եթէ անիկա վերադարձի արտօնութիւն չտայ ՄԱԿի գէնըրի քննիչներուն, որոնք Պաղատան հետագած են Դեկտեմբեր 1998ին:

«Կզիճիճու» չյայտնեց, թէ ո՞ր պաշտօնատարնե- րուն հետ տեսակցութիւն պիտի ունենայ Ազիզ: Անի- կա չյայտնեց նաեւ, թէ որքան պիտի տեւէ Ազիզի այցելութիւնը: Լրատու գործակալութիւնը յայտնեց, որ օրակարգի վրայ պիտի ըլլան երկկողմանի կա- պերն ու երկու երկիրները յուզող այլ հարցեր ու մտահոգութիւններ:

Արտաքին գործոց նախարարութիւնը, իր կարգին, մերժեց մանրամասնութիւններ տալ Ազիզի այցելու- թեան ժամանակացոյցին մասին:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ- զու շարժեցած է Սատտամ Հիւսէյնը, եթէ չենթար- կուի ՄԱԿի որոշումներուն ու չարտօնէ քննիչներուն վերադարձը, պատրաստ պէտք է ըլլայ կրելու բոլոր հետեւանքները:

Ապահովութեան նորոգողի անդամ Ռուսիա եւ Զինաստան համաձայն չեն, որ հակահարեկութեան պատերազմը ծաւալի դէպի Իրաք: Անոնք կողմնակից են նաեւ ՄԱԿի հաստատած պատժամիջոցները ջնջե- լու Իրաքի պահանջին:

Միւս կողմէ, Իրաքի պաշտօնական լրատու գոր- ծակալութիւնը՝ «ԻՆԱ» հաղորդեց, որ Սատտամ Հիւ- սէյն բանակին զինուորական կարողականութիւնը բարելաւելու հարցը քննարկեց Իրաքի բարձրաստի- ճան զինուորականներու հետ: «ԻՆԱ» աւելցուց, որ Սատտամ մտիկ ըրած է զինուորականներուն զեկու- ցումները բանակին յարձակողական ու պաշտպանո- ղական կարողականութիւններուն մասին: «ԻՆԱ» յայտնեց նաեւ, որ Սատտամ կ'ուզէ վստահ ըլլալ, որ Իրաքեան ուժերը պատրաստ են դէմ դնելու ամերիկե- ան նոր յարձակումի մը, որ կրնայ հրահանգուիլ Պուշի կողմէ:

ԱՇԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ ԱՐՄԱՏԱԽԻԼ ՊԻՏԻ ԸՆԵՆՔ ՄԵՐ ԸՈՂԵՐԷՆ

ԿԸՍԷ ՎԱՃՓԱՅԻ

Հնդկաստան երէկ յայտարարեց, որ պի- տի ճգնէ ահաբեկչու- թիւնը, շէշտելով, որ գետնի վրայ տակա- լին որեւէ փոփոխու- թիւն ու բարելաւում չէ արձանագրուած տազնապահար Քաշ- միրի մէջ, հակառակ Փաքիստանի տուած խոստումներուն:

Վարչապետ Աթալ Պեհարի Վաճփայի, որ Կորակոչի ենթա- կած ու պատերազմե- լու պատրաստ վիճա- կի մէջ դրած է բանա- կը, ըսաւ, որ Հնդկաս- տանի դէմ ուղղուած ահաբեկչութիւնը ան- հանդուրժելի պիտի ըլլայ: Վաճփայի, որ կը խօսէր սպայից վարժարանի ուսա- նողներուն ներկայու- թեան, շէշտեց, որ Հնդկաստան չի կրնար չպատասխա- նել, երբ ահաբեկչու- թեան թիրախ դառ- նայ: «Ահաբեկչու- թիւնը արձատախիլ պիտի ընենք մեր հո- դերէն», յայտարարեց Վաճփայի:

Ներքին գործոց նախարար Լալ Քրիշ- նա Ատուանի իր կար- գին յայտնեց, որ Փա- քիստանի նախագահ Փերվիշ Մուշարաֆի (30 նոյար 12) ի վեր, շօշափելի որեւէ փո- փոխութիւն չէ արձա- նագրուած Քաշմիրի մէջ, ուր իսլամական ծայրայեղականներ կը շարունա- կեն իրենց գոր- ծողութիւնները: Ատուանի յայտարարու- թիւններէն մէկ օր առաջ, Մու- շարաֆ կոչ ուղղած էր բանակցութիւններ կատարելու՝ վերջ տալու համար անել կացութեան: Մուշար- րաֆ ըսաւ, որ Փաքիս- տան պատրաստ է սկսելու լուրջ տիպո- կի մը իր դրացիին՝ Հնդկաստանի հետ:

Հնդկաստան կը պնդէ, որ Փաքիստան պէտք է Կորակոչու- թիւն յայտնէ իր հողե- րուն վրայ հաստատ- ւած ըմբոստ ծայրա- յեղականներուն, որոնք Քաշմիրի մէջ գործողութիւններ կը կատարեն: Վաճփայի իր խօսքին մէջ ըսաւ, որ Նի Տելիի ներքին եւ արտաքին ձեռնու- ներու վրայ կը պայ- քարի ահաբեկչու- թեան դէմ: Ան աւել- ցուց, որ Հնդկաստան պիտի պաշտպանէ իր



Վաճփայի

ներքին ապահովու- թիւնը, ինչպէս նաեւ՝ անթափանցելի պիտի դարձնէ իր սահմա- ները:

Փաքիստան ցարդ ձերբակալած է հա- ռիւրաւոր կրօնական ծայրայեղականներ, փակած է անոնց գրա- սենեակները, ինչպէս նաեւ՝ դատապար- տած է ահաբեկչու- թիւնը իր բոլոր ձեւե- րուն մէջ:

Միւս կողմէ, իսլամ ծայրայեղականներ յարձակում մը գոր- ծած են հնդկական բանակին մէկ կեդրո- նին վրայ, ձաւու եւ Քաշմիրի մէջ, ինչպէս Վիճի Վիճի Վիճի, յայտնեց ոստիկանու- թիւնը երէկ:

Այլ միջադէպով մը, ծայրայեղականներ ներխուժեցին բնա- կարանը ոստիկանի մը, Քաշմիրի հարա- նային շրջանին մէջ, սպանելով ոստիկա- նին կինն ու տղան, յայտնեց յիշեալ ոս- տիկանը, որ աւելցուց, թէ պիտեալները փա- խուստ տուած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՍԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ՝ ՅԻԼԻՓԵԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ

ԶԱՄՊՈՒՆԿԱ (ՖԻԼԻՓԵԱՆՆԵՐ), 27 (ՌՅԹԸՐԸ).— Ֆիլիպեաններու մէջ զինուորական բանքեր մը կիրա- կի օր յայտնած է, թէ ամերիկեան ուժեր հարաւային Ֆիլիպեաններու մէջ հսկողութեան համար պիտի շրջագային տեղական ուժերու հետ, որոնք կը պայ- քարին իսլամ զինեայներու դէմ, սակայն շրջաններու մէջ միայն, ուր բախումներու վտանգը մեծ չէ:

Բանքերը ըսած է, թէ հսկողութեան վայրերը, որոնք կ'իյնան միացեալ մարզումներու ծիրէն ներս, զգուշութեամբ պիտի ընտրուին ամերիկեան զերա- դիական սարքերու միջոցաւ: Մարզումները պիտի սկսին Յունուար 30ին:

Ամերիկեան ուժերը զինուած պիտի ըլլան եւ անոնց պիտի արտօնուի իրենց ինքնապաշտպանութիւն կրա- կել: Բազմաթիւ քննադատներ յայտնած են, թէ նման երեւոյթ արտասովոր է մարզումներու պարագային: Քննադատներ կ'ըսեն, թէ կառավարութիւնը մար- գումի պատրուակը կ'օգտագործէ քողարկելու հա- մար ճակատելու դեր ստանձնած ամերիկեան ուժե- րուն հաստատուելու: Նման բան մը հակասահմանադ- րական է:

Մարզումներուն պիտի մասնակցի ամերիկացի 600 զինուոր, սակայն ամերիկեան Մասնաշտաբակ ուժե- րու 120էն 160 անդամ միայն տեղացի զինուորներու հետ պիտի շրջագայի Պախլան կղզիին վրայ, ուր Ապու Սայաֆ խմբակին անդամ ծայրայեղականներ 8 ամիսէ ի վեր ամերիկացի 2 միսիոնարներ պատանդ կը պահեն:

Ուաշինկթոն Ապու Սայաֆը «Բալիտա» ցանցին կը կապէ: Պախլանի վրայ ամերիկեան ուժերուն հաս- տատումը Ֆիլիպեաններու մէջ Մ. Նահանգներու կող- մէ զինուորական նշանակալից առաջին միջամու- թիւնն է 1992էն ի վեր, երբ ամերիկեան նախկին գա- դուլին մէջ փակուած էր ամերիկեան զինուորական վերջին խորհուրդը: Այդ ձեւով վերջ գտած էր Ֆիլիպե- աններու մէջ ամերիկեան մէկ դարու ներկայու- թիւնը:

ՔՈՒՊԱՅԻ ՄԷՋ ՌՈՒՍԱԿԱՆ

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԿԵՐՐՈՆԸ ՓԱԿՈՒԵՅԱԻ

Քուպայի մէջ ռուսական լրտեսական կեդրոն մը ի վերջոյ փակուած է եւ անոր ելեկտրոնիք սարքերը պատրաստ են Մոսկուա փոխադրուելու, յայտնած է քուպական բանակի հրամանատարը՝ Ռուոլ Բասթրո Շարթօ օր:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին անցեալ Հոկտեմբերին գոհ ձգած էր Ուաշինկթոնը եւ գալա- ցուցած՝ Հուանան, յայտարարելով, թէ Մոսկուա պիտի բաշտի լրտեսութեան կեդրոնէն, որ ամերիկե- ան հողամասերէն հագիւ 160 քմ. հեռաւորութեան կը գտնուի:

Լուրտեսին հեռանալու որոշումը Քուպայի մէջ ռուսական զինուորական չորս տասնամեակներու ներկայութեան վերջ կու տար: Անիկա օգտագոր- ծուած է Մոսկուայի կողմէ ամբողջ Պաղ Պատերազմի տեւողութեան՝ ամերիկեան հաղորդակցութիւնները լսելու համար:

Մոսկուայի որոշումին յայտարարութեանէն ետք, նախագահ Ճորճ Պուշ կեդրոնը Պաղ Պատերազմի մէկ մնացորդը կոչած էր եւ յայտնած, թէ անոր փակումը պիտի օժանդակէ Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու միջեւ գործակցութեան:

Ռուսիա յայտնած է, թէ նիւթական խնայողու- թեան համար է, որ կ'ուզէ հեռանալ կեդրոնէն:

Քուպայի իշխող Համայնավար կուսակցութիւնը ըսած է, թէ փակումը ապահովութեան համար վտանգ պիտի ներկայացնէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱԶՍԱՍՄԱՐՏ ԱԿՈՒՄԲ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՃԵԼԻ ԵՐԵՎԱՆԵՐ

Ազատամարտ ակումբը այս Ընդաբքի եւ ամէն Ընդաբքի ժամը 8:00Է ետք կ'ընդու- մի իր բարեկամները եւ ազգայինները աղան- դերի ձոխ սեղանի շուրջ: Ըամեղ ուտելիք, հում եւ պատրաստուած մսեղէն եւ խմորեղէն (30 տեսակ): Խմիչքի զանազան տեսակներ՝ յարմար գիներով: Այս Ընդաբքի օր մաւէ՛ **ՀԱՌԱՐՍԱ** (ԸԱՅԱԿԱՆ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ)

Կարելի է մոխապէս ապահովել սեղաննե- րը հեռաձայնելով Ազատամարտ ակումբ 01/449924:

Կարելի է մաւէ ապահովել ապսպրանք ձեր տուններուն կամ հաւաքներուն համար:

ԼՈՅՍ ՏԵՄՍԻ

ՄՍՐՁԻՆ

Ի. ՏԱՐԻ, 2001
ԹԻՒ 12 (234)

ԵՐՔԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԿՈՒԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Մարդիկ» ի այս թիւով տեսնել՝

- Խմբագրական - Անցեալն ու ապագան
- Ամրապնդեցք բարոյական արժեքները (ԺԱ.) - Յարութ Զեքիճեան
- Ղեկավարը կը դպչի ժողովուրդի սրտին - Կ. Յովհաննէսեան
- Մեր Տեսակցութիւնները / Հ.Մ.Ը.Մ.Ի Արմէրի մաս- նաճիւղի առեւտրական Յարութիւն Պողոսեանի հետ
- «Երկրորդ Հինկիւր»՝ Մարի-Գարիանէ Միքայէլ- եան - Խաչիկ Մուրատեան
- Հ.Մ.Ը.Մ.Ի 2001-2002 տարեշրջանի ֆոթոպոլի խումբը - Գ. Թորոյեան
- Միջազգային մարզական տարուան օրացոյցը

Թիւր կ'ընդգրկէ նաեւ համացանցի, սկաւտական եւ մանկապատանական բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ական կեանքի անդրադարձներ: 40 գունա- տր էջեր: Մակ՝ 3000 լ.ն.:

Ստանալու համար դիմել Համազգայինի գրախա- նութ:

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզին, մագնիս, իւրից, ինչպէս մաւէ լուալու համար, վճարումին հետ միաժամա- ցակ մերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցու- թիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիր- ներու յաջողութեան:

ԻՆՉՊԷՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅԿԻԼԻ գրասեն- ցակ, Պուրճ Ըամուտ
- Հ ա մ ա գ ա յ ի ճ ի գրախանութ, Պուրճ Ըա- մուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնձար
- Գրատուն Կոմի- տաս, Պէյրուք
- Obelix հաստատու- քիւն, Անթիլիաս

FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՆԵՆԵԱԼ ԿԱՅՈՒԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

1. CORAL JAL EL DIB, Օւլ Էլ Տիպ
2. HYPCO ANTELIAS, Կարաթ Ալ Դուուարն
3. SPEED ANTELIAS, Կարողիկաւարանի դիմաց
4. CORAL BAADAT, Պապատե մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանտե առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանթիայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայի, Սաստ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալեթի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաուր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնձար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒԱՆ, Տորա, «Ալմագա» ի կից
15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅՈՒԱՆ, Պուրճ Ըամուտ, Սից Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԱՐԺԷՔՄՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇՆՈՒԹ ՄԸ

ԶԱՐԸ ԿԸ ՍՏԱՆԱՔ ՉՐԻՕՐԵՆ

ԲԱՅՈՒԱԾ Է ԱՐԴԵՆ TECHNO VISION

KODAK EXPRESS

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆԸ

- Հարսանեկան եւ ձեռնարկներու - video երի- գահանում:
- Իւրաքանչիւր ցկարահանման հետ մէկ ֆիլմ եւ ալպոմ մը ձրի:
- Նկարի յանձնում՝ 10 վայրկեանէն:
- Passportի ցկարի յանձնում՝ 2 վայրկեանէն:

Հասցէ.- Չալքայի օթոսթրատ, MAGIC FIREի կից:

Հեռ. 01-888829 եւ 03-615028, առաւօտ- եան ժամը 6:30Է մինչեւ երեկոյեան ժամը 8:00:

Բաց է Կիրակի օրերը մինչեւ կեսօրուան ժամը 1:00:

Պ. ՊՕՂՈՍԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՐՅ

ՋԱՒԱՔԻՒԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ Պ. ՊՕՂՈՍԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ ԿԸ ԴԻՄԵՆ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

Ջաւաքիւ մէջ գործող հասարակական եւ քաղաքական 18 կազմակերպութիւններ բաց նամակով մը դիմած են Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանին՝ խնդրելով վերջինիս աջակցութիւնը Պօղոս Պօղոսեանի սպանութեան դէմ պայքարին եւ «Ջաւաք» ժողովրդական Շարժումը, Վրաստանի Համայնավար Կուսակցութիւնը եւ «Շարլ Ազնաւուր» Բարեգործական Ընկերութիւնը:

Նամակին մէջ կ'ըսուի. «25 Սեպտեմբեր 2001ի գիշերը Երևանի «Առագաստ» սրճարանի մէջ տեղի ունեցած ոճրագործութեան, որուն զոհացած էր մեր հայրենակից Պօղոս Պօղոսեանը, գործի անաչառ քննութիւնը ապահովելու առնչութեամբ մենք միաժամանակ դիմած էինք ձեզ՝ հաւատարմորէ, որ ձեր կողմէ ձեռք կ'առնուին քայլեր, որոնք յատկանշական են բարձր վարկանիշ ունեցող պետական եւ քաղաքական գործիչին»:

Նամակին հեղինակները կը շարունակեն. «Հասարակութեան սպասումներուն հակառակ, հետաքննական մարմիններուն կողմէ դատարան ներկայացուած եզրակացութեան մէջ ամբողջութեամբ աղանաղուած են գործին հետ կապուած իսկական փաստերն ու անձերը: Առաջ քաշուած են անհիմն ու մտացածին փաստարկներ: Ոճրագործներու ստուար խումբէն «մեղադրանք» ներկայացուած է միայն մէկուէն՝ նկատմամբ: Անոնց հուժկու հարուածներէն նոյնիսկ պաշտպանուել կամ փախչել չկրցած զոհներ կայիս վերածուած է յանցաւորի, կոպտօրէն ոտնահարուած են իրաւաբանական, դատաբժշկական եւ բարոյական բոլոր օրէնքները, ինչ որ պէտք է մտահոգել իւրաքանչիւր ազնուարարոյ մարդ: Գէպքին ներկայ գտնուած Հարիւրաւոր քաղաքացիներ սեփական անձի պատպանութենէն եւ հետապնդումներու

ենթարկուելու վախէն կը խուսափին դատարանին մէջ վկայութիւններ տալէ:

Ա. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ ԳԱՍԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻ

23 Յունուարի դատական նիստին հետագումնաբեր են սպանեալ Պ. Պօղոսեանի դիակի բժշկական քննութեան եզրակացութիւնները, որոնց համաձայն, մահացու եղած է Պ. Պօղոսեանի ծոծրակին տրուած հարուածը, որ հարթ, լայն մակերեսով ըլլած առաջնայի մը ներգործութեան պատճառով եղած է, ինչպէս բացատրեց փորձագէտ Շաւարշ Գէորգեան:

Վկայութիւն տուած է նաեւ սպանեալին եղբայրը՝ Անդրանիկ Պօղոսեան, եւ ըսած է, որ զէպքէն ետք անհետացած է եղբորը ինքնաշարժին բանալին, 5000 տոլարի գումարը եւ լուսանկարչական գործիքը: Անհետացած էր նաեւ եղբոր բըլիարդի հեռաձայնը, որ աւելի ուշ գտնուած էր

քննիչին մօտ, իսկ դատավարութեան մէջ այդ պահը ներկայացնող ոչ մէկ արձանագրութիւն կայ:

Պ. Պօղոսեանի սեղանակիցներէն Եւրա Նաւոյեան օր մը առաջ դիմած էր դատարան՝ նշելով, որ վկայութեան կանչուած նախագահի թիկնապահներէն Գուրգէն Արսէնեանը տեսնելէն ետք յիշած է, որ «Առագաստ» սրճարանի մէջ Պ. Պօղոսեանին մօտեցողն ու զայն դուրս հրաւիրողը նոյն այդ թիկնապահը եղած է: Այս մասին ինք խօսած է վկայ Ստեփան Նալբանդեանի հետ եւ ան եւս իրեն համակարծիք եղած է:

Ս. Նալբանդեան, որ վկայութեան կանչուած էր, ըսած է, որ ինք ստոյգ կերպով չէ ըսած Եւրա Նաւոյեանին, որ ճանչցած է թիկնապահ Գ. Արսէնեանը, այլ միայն ըսած է, որ կրնայ ըլլայ, որ Գ. Արսէնեանը նոյն այդ անձը ըլլայ, որովհետեւ այդ երիտասարդ Գ. Արսէնեանի պէս միջնահասակ եւ նիհար էր:

ԼՈՒՐԵՐ ԶԱՒԱԽԵՆ

ՊԱՅԹԻՆ՝ ԱՆԱԼՔԱԼԱՔԻ ՄԻՉ

17 Յունուարին երկու պայթիւն տեղի ունեցած է Ախալքալաք քաղաքին մէջ: Նախ պայթիւն մը տեղի ունեցած է շրջանային նամակատան բաժանմունքի պետին առանձնարան յարող ցախատան մէջ եւ վերածուած է հրդեհի:

Նոյն օրը պայթիւն մը տեղի ունեցած է նաեւ շրջանային վարչութեան փոխ նախագահին՝ Համլէթ Դաշեանին պատկանող կառոյցին մէջ:

Ոստիկանութիւնը երկու դէպքերուն աւիթով քննութիւն բացած է:

ՄԱՐԳԱՀԱՄԱՐ

Վրաստանի մէջ 23 Յունուարին աւարտեցաւ 1 Յունուարին սկսած մարդահամարը: Այս մարդահամարէն ետք պարզ պիտի դառնայ ամբողջ Վրաստանի, ինչպէս նաեւ Ջաւաքի բնակչութեան թիւը: Պիտի յստակացուին նաեւ բնակչութեան ընկերային զբաղուածութեան, կրթական եւ այլ կարգի վիճակագրական տուեալները:

Յայտնենք, որ Մակայի եւ Նինոծմինդայի պէս լեռնային շրջաններու մէջ մարդահամարը տեղի ունեցած էր անցեալ տարուան Սեպտեմբերին, իսկ Ախալքալաքի եւ Ախալցխայի մէջ տեղի պիտի ունենայ այս տարուան աշնան:

ՋԱՒԱՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԸ

Ջաւաքի հոգեւոր կեանքը օրըստօր ակելի կ'աշխուժանայ: Այսպէս, Ջաւաքի առաջնորդական փոխանորդ Բարգէն արդ. Սալիպեանի ղեկավարութեամբ 18 - 19 Յունուարին Ջորջիէի արարողութիւն տեղի ունեցած է Ախալքալաք քաղաքին եւ կուլիգամ, Մաճատիա, Չամուրա եւ այլ գիւղերու մէջ:

ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ, ՏԱՐԵԳԻՐՔԵՐ

Հայ վարժարանը հնոցն է հայկերտուով: Հոնկէ ծնունդ կ'առնեն ու կը ծաղկին ոչ միայն գիտութիւն, կրթութիւն ստացող սերունդներ, այլեւ՝ հայ մշակութիւն բացուող հոգիներ: Գիր ու գրականութիւն, արւեստի հանդէպ ճաշակ, ազգային ժառանգութիւն գանձերուն տէր ըլլալու գիտակցութիւն: Հոգեմտաւոր դաստիարակութեան ճամբուն վրայ օգտաշատ գործօններ կը նկատուին մեր վարժարաններուն մէջ լոյս տեսնող պարբերաթերթերը, տարեգիրքերը, պատկերազարդ ալպոմները: Այս հրատարակութիւնները կը միտին նախ՝ ծանօթացնել տուեալ դպրոցին, երկրորդական վարժարանին ներքին կեանքը, հոն ծաւալած կրթական ծրագիրները, յաջողութիւնները, տարուան ընթացքին իրագործուած այլազան աշխատանքները: Արտադասարանային դրուածք ունին ընդհանրապէս այսպիսի հրատարակութիւններ, որոնց լոյս ընծայման հետամուտ կ'ըլլան ընդհանրապէս վարժարաններու տնօրէնները, հայերէն լեզուի, հայագիտական ուսուցման դասատուները եւ օտար լեզուներ դասաւանդող ուսուցիչները: Այսուհանդերձ գլխաւոր աշխատանքը կը մնայ հայագիտական նիւթերը դասաւանդող դասատուին ուսերուն:

Աւելորդ է նշել, թէ այս մարզին մէջ շնորհալի աշակերտներ կը յայտնաբերեն իրենց շնորհները: Թուիչք կ'առնեն անոնք՝ գրելով շարագրութիւններ, ոտանաւորներ (քանի որ լեզուներով), կը կատարեն հարցազրուցներ, կը ներկայացնեն դպրոցին մէջ իրագործուած ձեռնարկներու նկարագրականներ, կ'արձագանգեն այդ աշխատանքներուն: Վարժութիւն մըն է այս մշակուելու, ինչպէս նաեւ՝ կարողալու նորածաղկ շնորհալի աշակերտներու հոգին տազնապեցնող հարցերը: Դաստիարակներ, դասատուներ, դասընկերներ, ծնողք եւ ընթերցողներ վերահասու կ'ըլլան նոր սերունդին դէպի արուեստ ու մշակոյթ արեւելումին, անոր տեսիլքին, տազնապեցնուն եւ ներաշխարհային զգացումներուն: Ընթերցողին քաջաբերանքն այլ յաւելելով գրգռու մը կու տայ նորափետուր գրողին կամ ծաղկողին, ու այսպիսով կը մշակուի ապագային բացուող սերունդը:

Ուրախութեամբ կը հետեւինք պարբերաբար այս կամ այն վարժարանին մեր խմբագրութեան առաջնած դպրոցական մամուլին, աշակերտական հրատարակութիւններուն: Անոնցմէ ոմանք տարեգիրքեր են, տարուան վերջաւորութեան կամ նոր վերամուտին լոյս կը տեսնեն: Իբրեւ աշակերտական ստեղծագործութիւն՝ քիչ են գրութիւնները: Ուժը տրուած է դպրոցին ներքին կեանքը բացայայտելու: Ըսենք անմիջապէս, թէ նկարագրող ձեռնարկները եւս ունին իրենց թելադրական գործութիւնը՝ կը տեղեկանանք



Հարթական առեւտարաններուն, այս պահերուն դպրոց հրատարակուած հիւրերու բանաստեղծութեան, ազգային տօներու նշումներուն, «Գրական ակումբներ»



րու» շարժումներուն եւ այլն: Պարբերաթերթերը յաճախ ունին երկու բաժին. մաս մը կը ցույցնէ ներքին կեանքը, մեծ բաժին մը կը տրամադրուի գրական-ստեղծագործական արտայայտութիւններու: Ինչ ալ ըլլայ ուղղութիւնը լոյս ընծայուած մամուլին, որ երբեմն հարիւրաւոր էջերու կը հասնի, իսկ ընդհանրապէս տասնեակ մը էջերու ծաւալով, օգուտը յոյժ կենսական է ու շահող կ'ըլլայ հայ պատանին, հայ աշակերտը, հայ մշակոյթը: Մեր ընթերցողներուն միտքերը թարմացնելու եւ վերաբաղի հրաւիրելու համար գանոնք, փորձեցինք ակնարկ մը նետել լիբանանահայ դպրոցական մամուլին վրայ, որ այսօր հետեւեալ պատկերը կը պարզէ: Համագաղային Մ. եւ Հ. Արսլեանեան ճեմարանի տարեգիրքն է «Ջաւաքի»-ը, որ ունի տեղեկատուական թէ՛ գրական - գեղարուեստական բաժիններ, աշակերտական շարագրութիւններ, բանաստեղծութիւններու փորձեր, գրոյցներ, մշակութային արձագանքներ:

Հայ Աւետարանական քոլէճը (Պէյրուս) ամէն տարի կանոնաւոր կերպով կը հրատարակէ «Սիփան» տարեգիրքը, ծաւալուն էջերով, պատկերազարդ: Կը ներկայացնէ քոլէճին ամբողջ աշակերտութիւնը, ուսուցչական կազմը նկարներով: Աշակերտական ներքին ձեռնարկները կը ցույցնէ մանրամասնութեամբ: Սրբոց Հռիփսիմեանց վարժարանը կը հրատարակէ «Սլաք» տարեգիրքը: Ծոխ նկարազարդումով ներկայացուած են վարժարանին ներքին կեանքը, մշակութային - գեղարուեստական շարժումները լայն տարողութեամբ:

Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճը վերջին տարիներուն լոյս ընծայած է «Մեր Չայնը» անունով պարբերաթերթը՝ աշակերտական գրական փորձերու յատկացուած: 2001 - 2002 տարեշրջանին քոլէճը հրատարակեց «Ճառագայթ» պարբերաթերթը, ուր կը կարգանք աշակերտական շարագրութիւններ, ոտանաւորներ, հարցազրույցներ, հետաքրքրական հարցերու յատուկ էջ, եւ այլն:

Ազգային Ս. Խանամիրեան քոլէճը 1999 - 2000 տարեշրջաններուն լոյս ընծայած է «Մեր Չայնը» երկամսեայ թերթը, աշակերտներուն գրական աշխատանքները ցույցնող ըովանդակութեամբ:

Ազգային Եղիշ Մանուկեան վարժարանը կը հրատարակէ «Ռաջրուտ» տարեգիրքը: Այս տարի լոյս պիտի տեսնէ յապաւումով: Այս եւս գնահատելի նախաձեռնութիւն մըն է՝ գրական եւ տեղեկատուական բաժիններով յազդեցած:

Յայտնենք նաեւ, որ մեր թուած հրատարակութիւնները չորս լեզուներով են՝ հայերէն, արաբերէն, Ֆրանսերէն կամ անգլերէն:

Հարկ է կարեւորութեամբ նշել, որ դեռ մօտիկ անցեալին, նոյնիսկ քանի մը տարի առաջ մեր վարժարաններէն լոյս տեսնող պարբերաթերթերը այսօր դադրած են հրատարակուելէ, որովհետեւ երկրորդական վարժարանի կարգավիճակէն վերածուած են նախկին վարժարանի, ուր կարելի չէ գրական իմաստով մամուլ հրատարակել: Կ'ակնարկենք Ազգային Արգարեան վարժարանի «Լուսաբեմ»-ին:

Միւս կողմէ, առկա են նաեւ տնտեսական տազնապիլի յարուցած դժուարութիւնները, որոնց արգելք եղան լոյս ընծայման կարգ մը վարժարաններու մամուլին: Ինչ կը վերաբերի Այնճարի Հայ Աւետարանական վարժարանին, հոն լոյս կը տեսնէ «Ծիրազ» տարեգիրքը, երբ տարին անգամ մը:

Հայ Աւետարանական Թորոսեան վարժարանը կ'անուար կերպով կը հրատարակէ «Սողեր» տարեգիրքը՝ նուիրուած դպրոցին կեանքին:

2001 - 2002 կրթական տարեշրջանի վերամուտին, Մեսրոպեան վարժարանը սկսաւ լոյս ընծայել ամսաթերթ մը՝ Հայ կաթողիկէ «Լրաբեր», ուր տեղ կ'տրուին աշակերտական շարագրութիւններու, հարցազրույցներու, դպրոցական ձեռնարկներու եւ այլն: Կ'իմանանք, թէ Այնճարի Ազգ. Գ. Կիւլպէնկեան քոլէճը մօտ ապագային լոյս պիտի ընծայէ «Մուսա Լեռ» տարեգիրքը:

Մեր այս ամփոփ քաղաքաբար արգէն իսկ պատկեր մը կու տայ լիբանանահայ գաղութի հայկական վարժարաններու թափած ջանքերուն մասին, կարելիութեան սահմանին մէջ, որպէսզի միշտ վառ մնայ Մեսրոպ Մաշտոցի վառած ջահը:

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Պոլսոյ «Մարմարա» թերթը կը հարգող է, թէ վերջերս Պոլսոյ մէջ լոյս տեսած է Արսէն Եարմանի հեղինակութեամբ թերթերէնով գիրք մը, որ նուիրուած է օսմանեան շրջանի առողջապահա-

ՕՍՄԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆՑ ՄԷՉ ՀԱՅԵՐՈՒ ԳՐԱՒԱԾ ՏԵՂԸ

կան ծառայութիւններու մասնակցած հայերու եւ այս ծառայութեան ընդմէջէն՝ Ս. Փրկիչ հայոց հիւանդանոցին պատմութեան:

Այս գիրքին ընդմէջէն կը ներկայացուին այն ծառայութիւնները եւ նախապայմանները, որոս հայերը տարած են թուրքի մէջ՝ հին օրերէն մինչեւ այսօր: 900 էջնոց գիրքը կ'ընդգրկէ լուսանկարներ եւ փաստթուղթեր: Արսէն Եարման պատմաբան չէ, այլ՝ պատմու-

թեան ու արխիւներու պրպտումներ կատարելու սիրահար: Ան գիրքին պատրաստութեան համար ուսումնասիրած է թէ՛ հայկական եւ թէ՛ թրքական արխիւներ:

Գիրքը կը բաղկանայ քանի մը բաժիններէ: Նախ ակնարկով մը ներկայացուած է օսմանեան շրջանի փոքրամասնութիւններուն պատմութիւնը, հայ բնակչութեան թիւն ու վայրերը, հայերու նախնորդացիները: Ապա ընդարձակ բաժին մը յատկացուած է հայ բժշկագիտութեան պատմութեան, ներկայացուած է օսմանեան բժշկագիտու-

ած է Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցին նախաձեռնութեամբ:

Գիրքին մէջ հետաքրքրական է կարգալ, թէ ինչպէս հայերը Երևանի մէջ առաջին անգամ գլխու գործողութիւնները բրած են, օգտուած են բուսական աշխարհէն, թէ ինչպէս կ'ընդգրկեան հայկական աղբիւրները առաջին անգամ ըլլալով խօսած են քաղցկեղի ու անոր դարմանումին մասին, ներսէս կաթողիկոսի ու Տրդատ թագաւորի շրջանի առաջին հիւանդանոցին, Մխիթար Հեղաբի նախատեսութիւնները երկրաշարժերուն մասին եւ այլն:

Կը ներկայացուի նաեւ Ս. Փրկիչ հիւանդանոցին պատմութիւնը:

Գիրքը հրատարակ-


Աշակուբային Հե

Աշակուբային Հե

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐ

ՄԻՆՉ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հինգաբերթի, 24 Յունուարի երեկոյան ժամը 7:00ին, Ժըմէյգէի Ընկերամշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցաւ գեղանկարչական խմբային ուշագրաւ ցուցահանդէսի մը բացումը, «Երիտասարդ տաղանդներ» ընդհանուր խորագիրին տակ:



Յուցահանդէսին մասնակցած գեղանկարիչներու գործերն ցուցնուցին:

Նեն յատկապէս Հատի Ապու Սիւլէյման, Մահմէր Տիպալ եւ Մուհամմադ Մալախ Շապարո եւ Ղինա Միպալ, Մարալ Տէր Պողոսեան եւ Մարալ Տէր Պողոսեան յայտարարեցին իրենց գործերը: Հատի Ապու Սիւլէյման, Մահմէր Տիպալ, Մուհամմադ Մալախ Շապարո, բոլորն ալ մասնագիտական կրթութիւն ստացած կը թուին ըլլալ եւ որոշ չափով ճշգրտ են ստեղծագործական իրենց ուղին: Անոնց գործերը առօրեայ ապրումներէ, հոգեբանական շրջապատի տպաւորութիւններէ անդին կ'անցնին եւ կ'որոշեն պոետիկ ու գրեթէ անարար յոյզեր: Հոգեբանական բարդ վիճակներ ու ապրումներ կը ներկայացը-

րանգներու եւ վրձնահարուածներու աշխուժութեամբ: Անոր պատմաւոր «Տէրփիլոսեան» մշտական ու կառուցաւոր շարժումը, որ սուրճի փոխարինութեամբ կը ծնի, կը մտի սակընդիրին փոխարինել յաւիտենականութեան զգացողութիւնը:

Այս եւ նմանօրինակ այն խմբային ցուցահանդէսները, որոնց համար որակը նախապայման է, ոչ միայն երիտասարդները կը փառաբանեն, այլեւ ընդհանրապէս կը նպաստեն երկրին կերպարեստի գարգացման ու տարածման:

Հայկական խաչքարերը մէկ անգամէն չեն ծնած: Անոնք խարսխուած են հայ կոթողային արուեստի դարաւոր արժանիքներուն վրայ, որոնք կ'անդրադառնան ստորեւ տրուած ակնարկը, որ քաղուած է «Հայաստանի միջնադարեան կոթողային յուշարձանները», Թ. - ԺԳ. դարերի խաչքարերը» գիրքէն:

Հայկական լեռնաշխարհում հնագոյն ժամանակներից եղել են գերագանգապէս պաշտամունքային նշանակութիւն ունեցող կոթողային յուշարձաններ (մենհիրներ, վիշապներ, ուրարտական կոթողներ): Արտաշեսեան թագաւորութեան ժամանակահատուածում լայն տարածում են ստանում «Արտաշեսեան սահմանաքարեր» կոչուած կոթողները, բաղկացած ցածր խորանարդաձեւ պատուանդանից եւ նրա վրայ ամրացուած, վերեւում եռաճիւղ, ոչ բարձր, տափակ քարերից, որոնց մասին հաղորդում է Մովսէս խորենացին: Նման կոթողներ յայտնաբերուել են Սեւանի մարզում, Զանգեզուրում, Իլեւանի շրջանում, Սպիտակում եւ այլուր: Արտաշեսեան կոթողների վրայ փորագրուած են արամէական արձանագրութիւններ, որոնք մեծ մասամբ ունեն համանման բովանդակութիւն:

Թաւաղապար թորոս թորոսմանեանը որոշ վերապահութեամբ մահարձան է համարում Օշականում մինչեւ այժմ էլ կանգուն մնացած եւ աւանդաբար Մորիկ կայսրին կամ նրա մօրը վերագրուող 7րդ դարու յուշարձան կոթողը, սակայն, որ «... այն շիրիմ է, եթէ շիրիմ լինելը չհաւաստուի, այնուամենայնիւ հերքելն էլ դժուար է»:

Վաղ քրիստոնէական կոթողային յուշարձանների ամենատարածուած տիպը Հայաստանում քառակող ու պատկերազարդ կոթողն է, որը, հաւանաբար, ծագում է մինչ քրիստոնէական շրջանի յուշարձաններից: Այդ են վկայում նման կոթողների վրայ երբեմն հանդիպող հեթանոսական շրջանի մի շարք գարգամ-մոթիֆներ: Դրանցից մէկը Գառնահայկոթի Դ. - Ե. դարերի կոթողի այն դրուագն է, որտեղ պատկերուած է տերեւաբանդակների միջեւ կանգնած մի կերպար (հաւանաբար կին), որը գոյգ ձեռքով զլիխց վեր բռնել է քառակողի շրջանի, մէջը պատկերուած մի գոյգ ծաղկամոթիֆ: Գ. Յովսէփեանը այն եզակի նմուշ է համարում: Նա գրում է. «Նմանը չէ պատահած ոչ մի տեղ»: Յիշեալ դրուագը, որ հանդիպում է նաեւ հիթիթական արուեստում եւ, մեր կարծիքով, պատկերում է գարնան ակունքի տեսարանը, ըստ Գ. Յովսէփեանի, գալիս է, գուցէ եւ, հեթանոսական շրջանից: Ախուրեանի շրջանի մէկ այլ հնագոյն հայկական կոթողի գարգազութեան մօտաւոր նմանակ ունենք դարձեալ հիթիթական արուեստում: Այս դարաշրջանում ուշագրաւ են ասորիանաւոր պատուանդանների վրայ վեր խոյացող յուշարձան կոթողները, որոնց վրայ դրուած խոյակների յատուկ փոսիկների մէջ ազուցուել են քարաշին, թեւաւոր խաչեր (Անգեղակոթ, Դուին, Աւան, Զրվէթ, Օշական, Ուղտի ակունք եւ այլն): Ե. - Զ. դարերի մօտ 6,5 մետր բարձրութեան նման մի կոթող 1958 թուականին յայտնաբերուեց Զրվէթում: Այս յուշարձան կոթողների պատկերաւոր նկարազարդութիւնն արել է Ե. դարի պատմիչ Ազաթանգեղոսը:

Մտենագրական վկայութիւնները եւ վերջերս Գեղամայ լեռներում յայտնաբերուած նիւթական մշակույթի յուշարձանները, ինչպէս կը տեսնենք ստորեւ, չեն խօսում նման կոթողների սոսկ մահարձան լինելու տեսակէտի օգտին:

Տարածապետ թորոս թորոսմանեանը որոշ վերապահութեամբ մահարձան է համարում Օշականում մինչեւ այժմ էլ կանգուն մնացած եւ աւանդաբար Մորիկ կայսրին կամ նրա մօրը վերագրուող 7րդ դարու յուշարձան կոթողը, սակայն, որ «... այն շիրիմ է, եթէ շիրիմ լինելը չհաւաստուի, այնուամենայնիւ հերքելն էլ դժուար է»:

Մեր պատմիչները Հայաստանում արարների կողմից քառակող - պատկերազարդ եւ յուշարձան կոթողների խորատակման փաստը արձանագրելիս արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում նաեւ նրանց գարգաւորուեստի ու կանգնեցման հանգամանքների վերաբերեալ: Այսպէս, օրինակ՝ այդ ժամանակաշրջանի ղէպերին ակնատես Ղեւոնդ պատմիչը (որից ամենայն հաւանականութեամբ տեղեկութիւններ են քաղել թմուզ Արծրունին եւ Ստեփանոս Տարոնացին), նկարագրելով Եղիա խաչի (720 - 725 թթ.) Հայաստանում կատարած դաժանութիւնները, գրում է, որ նա «յաճեալ յայտնի պղծութեան բռնութենէ՛ տարլ հրաման փչրել եւ խորտակել գեղանշանազարդ պատկերաւոր ճշմարիտ մարդկութեան տեսանման մերոյ եւ փրկչին եւ նորին աշակերտացն: խորտակել եւ գնշան տէրուեան խաչին Քրիստոսի, որ ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն (նորա) եւ ի պատճառս երկրպագութեան համագոյ երրորդութեան...»:

Գիտական գրականութեան մէջ թէեւ հակասական կարծիքներ կան պատկերազարդ, քառակող եւ յուշարձան կոթողների ժամանակագրութեան մասին, բայց ընդունելի պէտք է համարել Գ. Յովսէփեանի ու Բ. Առաքելեանի այն եզրակացութիւնները, որ այդ յուշարձանները կերտուել են բացառապէս Դ. - Ե. դարերում: Սակայն միակողմանի է այդ յուշարձանների նպատակային նշանակութեան վերաբերեալ գիտնականների այն մտադրութիւնը, թէ՛ դրանք եղել են առաւելապէս մահարձանային կոթողներ:

Քառակող, պատկերազարդ եւ յուշարձան կոթողների ժամանակագրութեան եւ յատկապէս դրանց կերտուած մասին հակիրճ, բայց արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում Ազաթանգեղոսը (Ե. դար), Ղեւոնդ վարդապետը (Ը. դար), Թովմա Արծրունին (Ժ. դար), Ստեփանոս Տարոնացին (Ասողիկ (Ե. - ԺԱ. դարեր): Այդ վկայակոչումները ելակէտային նշանակութիւն ունեն ոչ միայն հայկական վաղ քրիստոնէական, այլեւ քրիստոնէայ այլ ժողովուրդների համանման յուշարձանների ուսումնասիրութեան համար:

Ազաթանգեղոսը խօսելով Հայաստանում Գ. դարու վերջում եւ Դ. դարու սկզբում քրիստոնէութեան ընդունման հանգամանքներ մասին՝ նկարագրում է յուշարձան կոթողները, տալիս դրանց ճշգրիտ ժամանակագրութիւնը, մասամբ էլ գործառնական նշանակութիւնը՝ որպէս պաշտամունքային կոթողներ: «Եւ տեսնելի ի մէջ քարաքար, մօտ յայպարանան արքունի, խարսխաձեւ ճարտարկաձեւ խարսխոսկի, մեծութեամբ իրբեւ գեղց մի բլուր, եւ ի վերայ նորա

Ղեւոնդ պատմիչի մէկ այլ վկայութեան մէջ ակնկալոր ու որոշակի նշուած են յուշարձան կոթողների կանգնեցման շարժամանիները եւ դրանց խորատակման փաստը: Նա գրում է, որ արարները «... խոկացին կործանել եւ շփոթել զարբութիւն եկեղեցեաց Քրիստոսի խորտակելին եւ գնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, զոր ապաւէն եւ հովանի լիս եւ ի մուտս կանգնեալ ի պատճառս երկրպագութեան համագոյ երրորդութեան. եւ հրկիզութեամբ բռնաշին ի միջոյ: Գ. Յովսէփեանը եւ Ս. Առաքելեանը իրաւացիօրէն գրում են, որ Ղեւոնդի խօսքերը վերաբերում են տուճարներից դուրս դրուած եւ առանձին կանգնած քառակող պատկերազարդ կոթողներին եւ սիւնանման յուշարձաններին: Այս խնդրի պարզարման համար ամենարժէքաւոր տեղեկութիւնն այն է, որ այդ քառակող, պատկերազարդ կոթողներն ու յուշարձանները, ըստ պատմիչի, որպէս «ապաւէն եւ հովանի» դրուած են եղել «լիս եւ ի մուտս», այսինքն՝ քաղաքների, դիւղերի ճանապարհների, հրապարակների լիք ու մուտքերում եւ երկրպագուել են «Սուրբ երրորդութեան» անունով: Այդ կոթողներին վերագրուող հովանաւորող եւ պահպանիչ նշանակութիւնը ակնյայտ է, այդպիսի դեր հետագայում վերագրում էր «Ամենազորակիչ» խաչքարերին:

Ղեւոնդ պատմիչի մէկ այլ հակիրճ վկայութիւնները հաստատուեցին վերջերս, Գեղամայ լեռներում գտնուած 7րդ դարու պատկանող երկու յուշարձան կոթողների օրինակով: Դրանից մէկը, որի արձանագրութեան մէջ խօսուած է գիւղի նուիրատուութեան մասին, կոչել է Ս. Երրորդութեան անունով, իսկ երկրորդը՝ կանգնեցուել է այդ տարածքի սահմաններում եւ դարձեալ կրում է Ս. Երրորդութեան անունը: Գեղամայ լեռների կոթողները ցարկ հայագիտութեանը

ԿԻՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ...

Գրեթէ ամէն կերպարեստագէտ կը պատկերէ կինը: Ո՞մանք ամէն ինչ կը տեսնեն ու կ'ար-

տալայտեն կին կերպարին միջոցով, ուրիշներ կը մասնաւորեն ու որոշ գերեր միայն կը վերապահեն կին կերպարին: Պարսիկ գեղանկարիչ Նուսրով Հասան Չատէ ունի իր յատուկ մօտեցումն ու մեկնաբանութիւնը կին էական հանդէպ: Անոր անհատական ցուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 16 Յունուարի երեկոյան ժամը 6:00ին, «Ժանիթ Ռեպլիկ» ցուցասրահին մէջ (Ռաուէլ):

Նուսրով Հասան Չատէ ծնած է Թեհրան, 1963ին: Գեղանկարչութեան զուգահեռ ան հետեւած է գրականութեան դասընթացները: Պարսկաստանի մէջ մասնակցած է բազմաթիւ խմբային ցուցահանդէսներու: Երկրի զուգահեռ ան իր գործերը ցուցադրած է

միայն Լոնտոնի եւ Պէյրութի մէջ: Նուսրով Հասան Չատէ կինները կը պատկերէ արեւելեան միջազգային մէջ եւ աւանդական տարազներով: Սեւ եւ երկար «ապալէ»ներու գործածութիւնն ու դէմքը ծածկելու սովորութիւնը կու գայ շատ հին (մինչեւ իսկ բարբելական) աւանդութենէ ու կը հասնի մինչեւ մեր օրերը: Այս օժտուած գեղանկարիչը ընդհանրապէս կ'իր կը պատկերէ անդէմ, սակայն ոչ ըրողութիւն անդիմազիծ: Ան դէմքը կը ծածկէ քալիկաֆիլ տարբերով, որոնք որոշ չափով կ'նոթ խոսունուածք կը բացալայտեն: Իսկ երբ կ'իր կը ներկայանայ բաց դէմքով, ան մտահոգ ու «դժգոհ» կը թուի ըլլալ իր կացութենէն:

Նուսրով Հասան Չատէի արուեստը ուրոյն է եւ իր խորհրդանշաններով ու արտայայտչաձեւերով թարմութիւն կը բերէ արեւելեան զգացողութեան մէջ:



Նմուշ մը՝ Նուսրով Հ. Չատի գործերէն:


ԼՌՈՒԹԻԻՆ՝ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Գոյնի զգացողութիւնն ու անոր ներգաղնական մը գեղանկարիչը կը մղեն դէպի երփնբերան աշխարհ մը, ուր ձեւեր իր տեղը կը գիլի գոյնին: Չեւի զգացողութիւնն ու անոր ներգաղնական արուեստագէտը կը մղեն ծաւալի այնպիսի ոլորտներ, ուր գոյնը կը գիլի ձեւին: Սակայն, երբ գոյնն ու ձեւը կ'ընդգրկուին համարաշինութեամբ, ի յայտ կու գայ

երրորդ տեսակի ներգաղնականութիւն մը, ուրկէ կը ծնի գեղեցիկը: Այս երրորդ տեսակի ներգաղնականութեան կը ձգտին Մուհամմադ Մալախ Շապարո, որոնք ցուցադրուած են «Չամալ» ցուցասրահին մէջ (Սատաթ փողոց): Յուցահանդէսին բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 16 Յունուարի երեկոյան ժամը 6:00ին, «Լոուիլի» ցուցասրահին մէջ, խորագիրին տակ:

Մուհամմադ Մալախ Շապարոն է Պէյրութ, 1960ին: Աւարտել է ետք «Չելսայի» եւ «Կոլտսմիթ» արուեստի հիմնարկները, ան իր ուսումը կը կատարելագործէ Փիետրո Վենուչչիի համալսարանը (Իտալիա):

Մալախ Շապարո արժանացած է «Շէյխ Չամալ Պըն Սուլթան» արուեստի մրցանակին: Մասնակցած է շարք մը կարեւոր ցուցահանդէսներու, ինչպէս՝ «Սըրսըթ» թանգարանի «Սայլոն տ'Օրոն»ին եւ «Հարվեսթ»ին: Ան օժտուած է գոյնի, ձեւի, եւ չափի լաւ զգացողութեամբ: Անոր գործերը



Նմուշ մը՝ Մուհամմադ Մալախ Շապարոի գործերէն:

կը պատկերեն խաղաղ ու հանգիստ միջավայր մը, որուն լուծութեան մէջ կ'ապաստանի կարծէք, եւ չափի լաւ զգացողութեամբ: Անոր գործերը

չստատուեցին վերջերս, Գեղամայ լեռներում գտնուած 7րդ դարու պատկանող երկու յուշարձան կոթողների օրինակով: Դրանից մէկը, որի արձանագրութեան մէջ խօսուած է գիւղի նուիրատուութեան մասին, կոչել է Ս. Երրորդութեան անունով, իսկ երկրորդը՝ կանգնեցուել է այդ տարածքի սահմաններում եւ դարձեալ կրում է Ս. Երրորդութեան անունը: Գեղամայ լեռների կոթողները ցարկ հայագիտութեանը

Վիստրե Եսքուսակուրոսի Կարգեր

ԵԹՈՎՊԻԱԿԱՆ ՔԱՐԱԿՈԹՈՂԸ ԵՐԿԱՐ ՇՈՒՔ ՄԸ ԿԸ ՉԳԷ ՀՌՈՄԻ ՎՐԱՅ

«ՆԻՒ ԵՈՐԸ ԹԱՅԱՂ» ԿԸ ԳՐԷ ԱՉԳԱՅԻՆ ՊԱՇՏԵԼԻ ԽՈՐՐՈՂԱՆԻՇԻ ՄԸ ՎԵՐԱՏԻՐԱՆԱԼՈՒ ՏԱԳԱՊԻՆ ՄԱՍԻՆ

Միայն քանի մը տարեցներ, երկար մօրուքով տղամարդիկ եւ ամբողջ կեանք մը աշխատելէ յոգնած ու կորաքամակ կրներ կը յիշեն այն օրը, երբ Ֆաշականներ կրակի ձեռքով սպառնալով քարակոթողը բռնակառքով տարին Աքսուսին:

Ապեպէ Աէմաէհու 12 տարեկան տղեկ մըն էր 1937ին եւ չի կրնար մոռնալ քաղաքացիներուն յուսաբեկութիւնը, երբ իտալացի զինուորներ կը ջանային փոխադրել 200 թոն ծանրութեամբ քարակոթողը: Առաջին փոխադրակառքը անկարող էր շարկելու բեռը: Հետեւաբար աւելի մեծ փոխադրակառք մը բերուած էր: Մուսուլիսիի զինուորները գործին տարողութենէն սարսափած՝ կը վանէին դիտողները:

Միայն քանի մը մանուկներ յաջողած էին տեսնել դէպի Հոռոմ երկար ճամբորդութեան պատրաստուող աւելի քան 100 տարուան քարակոթողը, որ եթովպիացիներուն համար պաշտելի խորհրդանիշ մըն էր:

«Երբեք պիտի չմոռնամ այդ օրը», կ'ըսէ Աէմաէհու, այժմ ալեհեր եւ կիներու ղէմքով 76 տարեկան ծերունի մը: «Ատիկա միշտ գրուած պիտի մնայ սրտիս մէջ»:


Դարեր առաջ Աքսուս կեդրոնն էր եթովպիական կայսրութեան, որ կը տարածուէր Ափրիկէի Եղջիւրէն անդին: Պատմագէտներ եթովպիական կայսրութիւնը կը դասեն հնադարեան աշխարհի մեծագոյն պետութիւններուն շարքին: Իսկ Աքսուսը փղոսկրի, անասուններու մորթի եւ հացահատիկի առեւտուրի կեդրոնն էր:

Թէեւ տկարացած եւ աղքատ, սակայն Աքսուս սրբազան վայր մըն է եթովպիացիներուն համար, որովհետեւ զլիստուր դերակատար է դպրոցի քրիստոնէութեան ընդարձակումին մէջ: Քաղաքին կեդրոնը տակաւին կանգուն կը մնան Աքսուսի փառքի օրերը յիշեցնող կարգ մը կոթողներ, ինչպէս՝ եկեղեցիներ, պալատներ եւ սրբապատ դամբարաններու վրայ բարձրացած նըբաշխատ քարակոթողներ:

Սակայն քաղաքին կեդրոնին մօտ, հոն, ուր ժամանակին կանգնած էր 24 մեթր բարձրութեամբ վեհաշուք քարակոթող մը, այժմ տեսանելի է միայն խորանի փոս մը:

Իտալացիք եթովպիայէն խոյս տուին Բ. Աշխարհամարտի վերջերուն: Սակայն Հոռոմի իշխանութիւնները տակաւին գրաւուած կը պահէին մոնոնաքարը, որ կանգնած է Փիլաց տի Փոյրեմ Քափենայի վրայ, ՄԱԿի շէնքին առջեւ, ուր ժամանակին կը գտնուէին Մուսուլիսիի արհիւկեան գրասենեակները:

Եթովպիացիք տասնամեակներէ ի վեր կը պայքարին մոնոնաքարին վերադարձին համար: Անոնց պայքարը երբեմն հասած է յաջողութեան սեմին: Սակայն Աէմաէհուի նման մար-



Հոռոմ փոխադրուած քարակոթողին Գման մոնումենտը մը՝ Աքսուսի մէջ:

դոց համար, որոնք եթովպիոյ մէջ կեանքի տեւողութեան միջինն են երբեք տասնամեակ կտրած են, ժամանակը արագ կ'անցնի:

«Բոլորս գայրացանք, երբ տարին մոնոնաքարը», կ'ըսէ Աէմաէհու: «Չափահասները կուլային եւ ինծի նման մանուկներ պարզապէս շուտարած էին: Եթէ Աստուած օրհնէ զիս, դարձեալ պիտի տեսնեմ զայն»:

Իտալիա 1947ին կնքեց թաղադուլութեան դաշինք մը, որուն համաձայն, պարտաւոր էր 18 ամսուան ընթացքին վերադարձնել իր գողոնը: Սակայն մոնոնաքարը տեղէն չչարժեցաւ: 1956ին ստորագրուած այլ համաձայնագիրով մը երկու երկիրները յայտարարեցին, թէ քարակոթողը «Եթովպիոյ պիտի վերադարձուէր իբրեւ հատուցում»: Սակայն այս համաձայնութիւնը եւս չիրացաւ մոնոնաքարը վերադարձնել Աքսուս:

Այլ համաձայնագիրով մը, որ կնքուեցաւ 1997ին, իտալիա կը յօտարէր մինչեւ այդ տարուան վերջը քարակոթողը վերադարձնել իր հայրենիքը: Եթովպիա անոր վերադարձը նշող զորոշման թուղթեր տպեց, սակայն մոնոնաքարը մնաց Հոռոմի մէջ:

Իտալիոյ մէջ կարգ մը կառավարութիւններ իրենց ժամանակէն առաջ փոխուեցան եւ նոր վարչակարգեր փորձեցին վերատեսուութեան ենթարկել հարցը: Հոռոմի իշխանութիւնները տեւաբար կը յայտարարեն, թէ շուտով պիտի վերադարձնեն քարակոթողը, իսկ Աքսուսի իշխանութիւնները կը յայտարարեն, թէ գայն ընդունելու տեղը պատրաստ է: Սակայն տարի-

ները կ'անցնին:

«Եթովպիացիներուն համբերութիւնը փորձաքարի կը գարնուի եւ գրեթէ հատած է», կ'ըսէ Եթովպիոյ երիտասարդական հարցերու, մարմնակրթանքի եւ մշակոյթի նախարարը, տագնապին մասին պետութեան կողմէ անցեալ շաբաթ հրատարակուած նորագոյն յայտարարութեան մէջ:

Անշուշտ մշակութային յատկանշական գործեր միշտ ալ մաս կազմած են պատերազմի աւարներու: Նոյնիսկ Աքսուսի բնակիչները կը հպարտանան նման կողոպուտով մը: Տեղական առասպելի համաձայն, Աքսուսի Մեհնէմ թագաւորը Երուսաղէմէն խոյս տուած է իրեն հետ տանելով Ուխտի Տապանակը, որ Հին Կտակարանին մէջ յիշատակուած գանձ մըն է: Այժմ կրօնաւոր մը կը հսկէ Աքսուսի մէկ մատրան, ուր կը գտնուի տապանակը, ինչպէս կ'ըսեն եթովպիացիները:

Սակայն, երբ հարցը կը վերաբերի քարակոթողին, Աքսուսի բնակիչները անհրաժեշտ կը նկատեն վերատեսուութեան ենթարկել պատմութիւնը:

Վերջերս, երբ դարձեալ սրեցաւ բանավէճը, իտալիոյ մշակութային ժառանգութեան փոխ նախարար Վիթթորիո Սկարպի յայտարարեց, թէ պիտի հրաժարի իր պաշտօնէն, եթէ քարակոթողը վերադարձուի:

Սկարպի իր ակնարկութիւններով ընդվզում յառաջացուց Աքսուսի եւ Եթովպիոյ մայրաքաղաք Ատիս Ապեպայի մէջ: Անցեալ ամիս նա յայտարարեց, թէ «Իտալիա չի կրնար համաձայն գտնուիլ, որ իր լաւ պահպանած եւ վերանորոգած մէկ կոթողը տարուի պատերազմի գօտի մը, գայն մատնելով աւերումի վտանգին»: Ան կ'անարկել Եթովպիոյ եւ Եթիոփէայի միջեւ սահմանային պատերազմին, որ որոշ ժամանակ մը զգուշաւորութիւն պարտադրեց իտալիոյ: Աքսուս կը գտնուի Եթովպիոյ հիւսիսային բարձրաւանդակին վրայ, էրիթրէայի մօտ:

Սկարպի քարակոթողը վերադարձնելու փոխարէն՝ առաջարկեց իտալացի ճարտարագէտներ ուղարկել Աքսուս, կարգ մը տապալած քարակոթողներ վերանորոգելու համար:

Եթովպիացիք կ'արհամարհեն այն կարծիքը, թէ իրենք չեն կրնար պաշտպանել քարակոթո-

ղը: Եթովպիոյ ամէնէն հսկայական քարակոթողը տապալած է, երբ տակաւին կը կառուցուէր: Հոռոմ փոխադրուած քարակոթողը հաւանաբար տապալած է իտալացի զինուորներու ժամանուածէն առաջ: Սակայն Աքսուսի բնակիչները կ'ըսեն, թէ անիկա գանձ մըն է իրենց համար եւ պէտք է վերադարձուի:

«Սահմանային մեր վէճերը իրենց չեն վերաբերիր», կ'ըսէ Աքսուսի մշակոյթի նախարարը՝ Ֆիսեհա Ջիպլեո: «Վերջին 3000 տարիներուն պահպանած ենք մեր քարակոթողները: Գիտենք՝ ինչպէս պէտք է հողալ գանձնք: Մոնոնաքարը ամէնէն աւելի ապահով պիտի ըլլայ իր հայրենիքին մէջ»:

Եթէ քարակոթողը երբեք չի վերադառնայ, անիկա պիտի զետեղուի այն գերեզմանին մէջ, ուր կանգնած էր սկիզբը, տապալած հսկայական մոնոնաքարի մը եւ իր կեդրոնէն քիչ մը շեղած այլ մոնոնաքարի մը միջեւ: Անիկա պիտի շրջապատուի աւելի փոքր եւ զարդարանքէ զուրկ մոնոնաքարերով:

Անցեալ տարի Ջիպլեո աշխատած է, որ մոնոնաքարին վերադարձը պահանջող խնդրագիրներ ներկայացուին իտալիոյ պետութեան: Ան նոյնիսկ Հոռոմ այցելած է գայն տեսնելու համար:

«Մտածեցի, որ մոնոնաքարին տեղը հոն չէր», կ'ըսէ ան: «Անիկա իտալացիներուն չի պատկանիր: Ուզեցի գայն հետս բերել»:

Մինչ այդ Աքսուսի բնակիչները կը սպասեն յոյսով:

Երիտասարդ առեւտրական մը՝ Նեկասի Յեհայ կը նախատեսէ, որ զրօսաշրջիկներ պիտի հետեւին մոնոնաքարին:

«Նստուկիս մէջ նստած կը սպասեմ ճիշդ հօրս պէս», կ'ըսէ ան: «Գիտենք, որ երբ քարակոթողը վերադառնայ, յաճախորդ պիտի ունենանք»:

Աէմաէհու կ'ըսէ, թէ իտալիոյ կողմէ Եթովպիոյ գրաւումը միայն 5 տարի տեւած է, սակայն անիկա իրողապէս վերջ պիտի չգտնէ մինչեւ քարակոթողին վերադարձը:

«Պիտի սարքենք ամէնէն մեծ տօնախմբութիւնը, զոր Աքսուսը երբեք չի տեսած է», կ'ըսէ ան: «Այս մոնոնաքարը հպարտութիւն կը պատճառէ մեզ, եւ եթէ վերադառնայ, պիտի մոռնանք, թէ ինչ պատահած է իտալացիներուն եւ մեր միջեւ: Դարձեալ հպարտ պիտի զգանք»:

ԱԻԱՐԸ ՅԱՂԹՈՂԻՆ

ՅՈՒՆԱՍՏԻ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՊԱՇՏԵԼԷ ԵԿԻՆԻ ՍԱՐՍԱՐՆԵՐԸ՝ ՎԵՐՍՏԻՆ ԵՐԱՐԵԼՈՎ ԱՐՈՒԵՍԻ ԳՈՂՅՈՒՄ ԻՐԵՐՈՒ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՎԵՃԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԷ «ՈՈՅԹԸՐԸ»

Երկու շաբաթ առաջ Յունաստան պաշտօնական դիմում ներկայացուց Բրիտանիոյ պահանջելով Աքրոփոլիսի տաճարէն պոկուած էլիկիին մարմարներուն վերադարձը: Աքրոփոլիսի մէջ նոր թանգարան մը պիտի կառուցուի յատկապէս անոնց ցուցադրութեան համար: Թանգարանի բացումը տեղի պիտի ունենայ 2004ի Ողիմպիական խաղերէն կարճ ատեն մը առաջ:

«Մօտ ենք մեր նպատակին իրագործումին», կ'ըսէ Յունաստանի մշակոյթի նախարարը:

Էլիկիին 2500 տարուան քանդակները կը ցուցադրուին Բրիտանական թանգարանին մէջ, որուն տնօրէնը կ'ըսէ, թէ անոնց վերադարձը պահանջող որեւէ պաշտօնական դիմում չէ ստացած: Երկարատեւ բանավէճը յաճախ լարուածութիւն ստեղծած է Աթէնքի եւ Լոնտոնի միջեւ:

Յունաստան կը պնդէ, թէ բրիտանացի զիւանազան Լորտ Էլիկիին երկու դար առաջ օսմանեան իշխանութիւնները կաշառելէ ետք, Յունաստանի Փարթենոնի տաճարէն ապօրինի ձեռով պոկած է 56 քանդակներ եւ 19 արձաններ: Յոյները գահնոր կը կոչեն «Փարթենոնի մարմարներ»:

Բրիտանական թանգարանին տնօրէնին համաձայն, մարմարները կարելի չէ վերադարձնել, որովհետեւ անոնց պահպանները իրաւունք չունին ցուցադրուող որեւէ իր տեղափոխելու:

Երբ էլիկիին մարմարները Աթէնք վերադարձնելու նոր դիմումներ ներկայացուցան Բրիտանիոյ, աշխարհի տաճարներին այլ թանգարաններու պատասխանատուներ մտահոգութիւն յայտնեցին, թէ թանկագին այլ գանձերու առընչութեամբ նմանօրինակ պահանջներ կրնան ծագել:

Արուեստի միջազգային հաւաքածոներու մաս կը կազմեն հազարաւոր հազուադիւր գանձեր, որոնք դարերու ընթացքին բերուած են աշխարհի տարածքին շրջող հնագէտներու, պատեհապաշտ առեւտրականներու կամ արշակող բանակներու կողմէ:

Վիճելի պատկանելիութեամբ արուեստի գործերը սակաւաթիւ են: Սակայն երբ անոնց շարքին են Փարթի կը Լուվր թանգարանին մէջ ցուցադրուող վենիս տը Միլոն, Լոնտոնի մէջ պահուած առասպելական հսկայական աղամանը մը եւ 19րդ դարու Փրանսացի գեղանկարիչներու գործեր, որոնք Ռուսիա

տեղափոխուած են, վէճերը կը սրին: Նացիներու պատերազմի աւարին վերադարձ պահանջողներուն համար հետզհետէ կ'աւելանայ՝ ստիպողական վիճակ ստեղծելով:

«Եթէ ամէն ինչ վերադարձուի այն վայրը, ուր կէ եկած է, ապա Հիւսիսային Եւրոպայի արուեստի պատկերասրահներուն կէսը կրնայ փակուիլ», կ'ըսէ «Ռիփաթի Կրուֆի» մէկ պատասխանատու, Սկոթլանդի մէջ:

Բրիտանական թանգարանին տնօրէնը համաձայն է վերջնիշխալ կարծիքին: Ան անցեալ շաբաթ «Թայմ» օրաթերթին մէջ գրած է. «Հատուցումի հարցը, այսինքն՝ երկրի մը մէջ գտնուող արուեստի որեւէ գործ աշխարհագրական իր սկզբնական վայրը վերադարձնելու պայմանը կրնայ առաջնորդել Բրիտանական թանգարանին եւ բազմաթիւ մեծ թանգարաններու պարպումին»:

Սակայն բրիտանական խորհրդարանի անդամ Ռիչըրտ Ալըն, որ վերջերս աշխարհի գերաստղերը հրաւիրեց մարմարները Յունաստանի վերադարձնելու քարոզչական արշաւի մը, կ'ըսէ, «Ափրիկէի պատմութեան մէջ ամբողջ էջ մը կորսուած է», կ'ըսէ ան: Ապա կայ նաեւ արդէն ցուցադրուող իրերու կամ մուկ նկուղներու մէջ փոշիի տակ մնացած արուեստի գործերու հարցը:

«ՆՈՅ ՊԵՏՔ ՈՒՆԷՐ ԻՐ ՏԱՊԱՆԻՆ»

Քանի մը տարիէ ի վեր ամերիկացի երկրաբաններ կ'ըսեն, թէ իրենց յայտնաբերած ապացոյցներով կարելի է հաստատել Աստուածաշունչին մէջ յիշատակուած ջրհեղեղի պատմութիւնը: Այժմ քանադայի երկրաբաններ հակառակ կը պնդեն: «Կլոպ Ինթրիքթիվ» լրատուական ցանցին կողմէ հրատարակուած յօդուած մը՝ «Տիտ Նոս Նիտ տի արք», կը ներկայացնէ հակադիր տեսակէտներ:

Քրուումպիայի համալսարանէն երկու երկրաբաններ՝ Ուոլթըր Փիթման եւ Ուոլթըր Ռայլը 1997ին ցնցեցին գիտական աշխարհը՝ յայտարարելով, թէ իրօք մեծ ջրհեղեղ մը տեղի ունեցած է Ն. Ք. 7000ին, այսինքն՝ Աստուածաշունչին մէջ նշուած թուականին, երբ Նոյ Աստուծոյ թելադրանքով իր ընտանիքն ու տարրեր անասուններ լեցուց տապանի մը մէջ եւ փրկուեցաւ ջրհեղեղէն:

Փիթման եւ Ռայլըն համոզուած են, որ երբ սառցալեռներ հալած են, Միջերկրականի ջուրի մակարդակը բարձրացած է եւ կուտակուած տիղմը բնական ամբարտաճ մը ստեղծած է Միջերկրական եւ Սեւ ծովի վերին միջին, Վոսփորի նեղուցին վրայ: Սակայն հետզհետէ բարձրացող ջուրերուն ճնշումին իբրեւ պրոպելլոր՝ ամբարտաճը խորտակուած է: Ասիկա պատճառ դարձած է, որ մէկ վայրկեանի մէջ շուրջ 12 միլիարդ խորանարդ մեթր ջուր յորդի դէպի Սեւ ծովուն աւազանը, ուր հաստատուած էին որսորդութեան փոխարէն հողամշակութեամբ ապրող առաջին հաւաքականութիւնները: Փիթմանի եւ Ռայլընի համաձայն, Սեւ ծովուն ջուրի մակարդակը արագօրէն բարձրանալով ջրամոյն ըրած է լեռները եւ մահ սպանած է:

Այն ժամանակ, երբ այս երկու գիտնականները կը հրատարակէին իրենց ուսումնասիրութիւններուն արդիւնքը, Նիւֆունտլենտի Մեծորիւր համալսարանէն (Քանադա) երկու երկրաբաններ՝ Ռիչըրտ Հիւքսթը եւ Ալի Աքսու կը հետազօտէին Սեւ ծովուն հարաւորութեան յատակը:

Սակայն անոնց յայտնաբերումները վերջին 20 հազար տարիներուն Վոսփորի նեղուցէն դէպի Սեւ ծով ջրհեղեղի մը ապացոյցներ չէին ընձեռեր: Ընդհակառակը, անոնք ցոյց կու տային, թէ 10 հազարէն 12 հազար տարի առաջ ծովուն մակարդակը շատ աւելի դանդաղ բարձրացած է, երբ սառցալեռները սկսած են հալիլ:

Սակայն անոնց յայտնաբերումները վերջին 20 հազար տարիներուն Վոսփորի նեղուցէն դէպի Սեւ ծով ջրհեղեղի մը ապացոյցներ չէին ընձեռեր: Ընդհակառակը, անոնք ցոյց կու տային, թէ 10 հազարէն 12 հազար տարի առաջ ծովուն մակարդակը շատ աւելի դանդաղ բարձրացած է, երբ սառցալեռները սկսած են հալիլ:



ՊԱՏԵԹՊՈՒ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՂՈՅ ԵՒ ԱՂՋԿԱՆՑ ԿԱԶՄԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Լիրանանի պատեթոլի Բ. դասակարգի աղջկանց 13րդ եւ նախաձեռնողին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի աղջիկները 56-36 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Անդրանիկ Ալէյը, ապահովեցին ֆայնըլ ֆորի մրցումներուն իրենց տոմարը: Վերջին հանգրուանին Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի կը մրցի Շապապ Ռախմի դէմ:

Պուրճ Համուտի աղջիկները, սակայն, 52-33 արդիւնքով պարտութիւն մը կրեցին Յրէյր Պէյթ Մէրիէն: Տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան 21րդ եւ նախաձեռնողին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի տղոց ներկայացուցչական կազմը 95-73 արդիւնքով պարտութեան մատնեց Ռոզէրը:

● ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ նահանգէն ներս տեղի ունեցող տղոց Գ. դասակարգի ախոյեանութեան, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս ապահովեց Գ. հանգրուանի իր տոմարը, երբ մրցակից կազմը Շիրաա Պուար դաշտ չներկայանալով, Հ.Մ.Ը.Մ. 20-0 յաղթական հռչակուեցաւ:

ՃԱՏՐԱԿ ՅՈՎԻԿ ԱՐԱՄԱԼԵԱՆ ԵՒ ՄԵՂՐԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Երէկ, Յրէյրներու ակումբին մէջ (Յըրն Շըպպէ) տեղի ունեցաւ ճատրակի տարիքային մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին շուրջ վաթսուսն տղաք ու աղջիկներ:

16 տարեկանէն վար տղոց դասակարգին մէջ առաջին հանգրուանը Յովիկ Արամալեան, իսկ տասը տարեկանէն վար աղջկանց դասակարգին մէջ երկրորդ հանգրուանը Մեղրի Կիրակոսեան: Յովիկ եւ Մեղրի երկուքն ալ կը յաճախեն ձեմարան եւ երկուքն ալ մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի մասնաճիւղի ճատրակի խումբին:

ՊՈՒՆՏՍՍՈՒԿԱ

ՊԱՅԵՐ ԼԵԻԵՐՔՈՒՉԸՆ՝ ԱՌԱՋԻՆ ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՒՆ ԿՐԵՅ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Աւելի քան ամիս մը տեւած ձմեռնային արձակուրդէն ետք, շաբաթափեր Վերսիլիս Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութիւնը (Պուստալիկա), 19րդ հանգրուանի մրցումներով:

Պարագուէի դիրքը գրաւող Պայեր Լեւերքուզն արձանագրեց եղանակի իր 13րդ յաղթանակը, իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Հանպա Ռոսթըրը (13րդ): Թունս Պուստալի (76րդ) եւ Միքայէլ Պայաք (80րդ՝ փենալթիով) նշանակեցին 1 և 2 կէտերով իր կոլերը:

Պայերն Միւնիխ, սակայն, ծանր պարտութիւն մը կրեց, երբ 5-1 արդիւնքով պարտուած հեռացաւ Շալքէի դաշտէն (7րդ): Անիկա այսպիսով կրեց եղանակի իր 5րդ պարտութիւնը եւ իր կատարած վերջին 7 մրցումն ըլլալով կը ձախողէր յաղթանակ մը արձանագրել: Եսիլ Միւնիխ (34րդ), Էպէ Մէնս (35րդ), Եոքի Պոէնս (54րդ), Մարքո Վան Հուստալ (75րդ) եւ Նիլս Օստը Բէմի (90րդ) նշանակեցին Շալքէի կոլերը, իսկ Միւնիխ Շոլ Պայերի կոլը (48րդ): Նշենք, թէ Բ. կիսախաղը ամբողջութեամբ Պայերն մրցումը շարունակեց տարւաբար կողմով, երբ Միքայէլ Թառնաք կարմիր քարտ մը ստացաւ (41րդ):

1860 Միւնիխ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Բէյրնը: Մարթին Մաք (56րդ), Ռոնա թալսէ (61րդ) եւ Տաուր Սիլբըր (80րդ) նշանակեցին Միւնիխի կապիտան կոլերը:

Նոյն արդիւնքով պարտութիւն մը կրեց Համպուրկ Շթրոֆկարթի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին: Անիկա կը կրէր եղանակի իր 9րդ պարտութիւնը: Պարտութիւն Տարմունտ (2րդ) իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Հերթա Պերիլը, շնորհիւ՝ Եան Բոլլըրի (7րդ) եւ 54րդ) եւ Բրիսթիան Վեօրնի (76րդ) նշանակած կոլերուն:

Table with 2 columns: Team Name and Score. Includes teams like Շալքէ, Պայերն Միւնիխ, Չանքթ Փուսլի, etc.

Table with 2 columns: Rank and Score. Lists top scorers like Պայեր Լեւերքուզն, Պորուսիա Տորթմունտ, etc.

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱԽԱ ԱՐԼԻ ԱԼԵՅ - Շ. Մ. Ը. Մ.՝ 3-1 - ՍԱԺԵՍ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ԿՐԱՅ

Լիրանանի ֆութպոլի ախոյեանութեան 10րդ հանգրուանին, Շարաթ օր Հ.Մ.Ը.Մ.Ի ֆութպոլի ներկայացուցչական կազմը Պէյրուսի Բադաբապետարանի դաշտին վրայ իր կատարած մրցումին կրեց եղանակի իր 8րդ պարտութիւնը, այս անգամ՝ Ախա Ալի Ալէյէն, 3-1 արդիւնքով:

Հազիւ շուրջ յիսուն համակիրներու ներկայութեան, Հ.Մ.Ը.Մ. թէեւ լաւ ձեւով սկսաւ մրցումը, սակայն Ա. կիսախաղին իր բերդէն ներս ստացաւ 2 կոլ, (30րդ՝ փենալթիով եւ 35րդ): Բ. կիսախաղին Ալէյի կազմը նշանակեց իր երրորդ կոլը (60րդ), իսկ Հ.Մ.Ը.Մ.Ի կոլը նշանակեց Իզզէթ Սալիլ (80րդ): Սաժէս մնաց պարագլուխի դիրքին վրայ, 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ալի Սալտան:

Իր չորրորդ պարտութիւնը, 1-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Թրիփոլիէն, ուր տեղի տուաւ Սալամի դիմաց: Մեծագոյն յաղթական երեզու Նրժմէ, որ 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռասիկը:

Table with 7 columns: Team Name, Goals, Assists, etc. Lists teams like Ռասիկ, Նրժմէ, Շ.Մ.Մ., etc.

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԵՒ ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՆՈՒՆԱՅԹԸՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

Անգլիոյ ֆութպոլի բաժակի մրցաշարքի Գ. հանգրուանի մրցումներուն, շաբաթափերին արձանագրուեցան անակնկալներ, որոնց ընթացքին բարձրագոյն դասակարգէն մաս կազմող չորս խումբեր զուրս մնացին մրցաշարքէն:



Արսենալ - Լիվերփուլ մրցումէն. Ռէյ Փարլոր (ձախից) կը փորձէ կասեցնել Ճէյմի Զարաքը:

Մեծագոյն պարտեաները եղան Լիվերփուլ եւ Մանչեսթըր Եունայթեդ, որոնք տեղի տուին իրենց մրցակիցներուն դաշտերուն վրայ: «Հայպըրի» մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր 38 հազար համակիր, Արսենալ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Լիվերփուլը, շնորհիւ Տենիս Պերկեմսի նշանակած կոլին (28րդ):

Բաժակակիր Արսենալ, սակայն, մրցումը աւարտեց ինը մարգիկով, Մարթին Բէճմի (67րդ) եւ Տենիս Պերկեմսի (71րդ) գաշտէն վտարուածէն ետք: Լիվերփուլէն կարմիր քարտ ստացաւ Ճէյմի Քարաքը (72րդ):

Երկրորդ անակնկալը ստեղծեց Միտլըպոլթո, որ իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մանչեսթըր Եունայթեդը: Միտլըպոլթո իր երկու կոլերը նշանակեց մրցումին վերջին հինգ վայրկեանին, շնորհիւ Նոէլ Ուիլքին (85րդ) եւ Էնտի Բէմպլի (89րդ):

Չարթըր իր գաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Ուոլսոլթն (Ա. դասակարգ), զուրս մնաց մրցաշարքէն: Այլ անակնկալ մը ստեղծեց Ուեսթ Պրոմոութի (Ա. դասակարգ), որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Լայսթըր Սիթիին:

Պէյքպըրն դժուարութեան մէջ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Միլուոլի դաշտէն (Ա. դասակարգ) շնորհիւ Էնտի Բէմպլի (85րդ) եւ Էնտի Բէմպլի (89րդ):

Արսենալ - Լիվերփուլ մրցումէն. Ռէյ Փարլոր (ձախից) կը փորձէ կասեցնել Ճէյմի Զարաքը:

Table with 3 columns: Team Name, Goals, Assists. Lists teams like Արսենալ, Լիվերփուլ, Չելսի, etc.

ԹԵՆԻՍ. ԱՌԱՍՏԱՆՈՅ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ՔԱՓՐԻԱԹԻ ԵՒ ԵՈՂԱՆՍԸՆ՝ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ



Քափրիաթի բաժակը կը ձօնէ Տէրընի:

Անցեալ շաբաթափերին Մեկուսի մէջ վերջ գտաւ 2002ի առաջին կրան շլէմի մրցաշարքը՝ Աւստրալիոյ բաց մրցաշարքը: Շարաթ օր, աղջկանց աւարտականին, աշխարհի թիւ 1ը՝ ամերիկացի Ճենիֆըր Քափրիաթի, որ անցեալ տարուան տիտղոսակիրն էր, դարձեալ տիրացաւ տիտղոսին, երբ պարտութեան մատնեց գուիցերիացի Մարթինա Հինկիսը՝ 4-6, 7-6 եւ 6-2 արդիւնքով:

21 տարեկան գուիցերիացին, որ յաջորդաբար վեցերորդ անգամ ըլլալով կը հասնէր աւարտական մրցումին, դարձեալ ձախողեցաւ տիտղոսին տիրանալ, հակառակ անոր որ ան առաջին սէքին յաղթանակ մը արձանագրած էր:



Թոմաս Եոհանսըն

Քափրիաթի տիտղոսին տիրանալէ ետք, մարզական բարձր ոգիով եւ վեհանձնօրէն իր ստացած բաժակը ձօնեց աւստրալիացի Տէրըն Պարթոլոմիայի, որ կը տառապէր քաղցկեղէն եւ ըստ բժիշկներուն՝ հազիւ քանի մը ամսուան կեանք ունի միայն: Քափրիաթի երեք տարի առաջ 26 տարեկան Տէրընի հանդիպած էր՝ Մեկուսի մէջ բժշկական կեդրոն մը այցելութեան ժամանակ:

Տղոց աւարտական մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, վերջ գտաւ աշխարհի թիւ 16ին՝ շուէտացի Թոմաս Եոհանսընի յաղթանակով, որ 3-6, 6-4, 6-4 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց 9րդ դասուած ուս Մարաթ Սաֆինը: Եոհանսըն, որ կը շահէր իր առաջին կրան շլէմ տիտղոսը, անակնկալի բերաւ Սաֆինը, որ նոյն օրը կը տօնէր իր ծննդեան 22րդ տարեդարձը: Տղոց զոյգի մրցումներուն, Մարք Նոլլըր (Պահամաս) - Տանիէլ Նեսթոր (Քանադա) զոյգը 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց Մայքըլ Լոտրա - Ֆայրիս Սանթորո (Ֆրանսիա) զոյգը: Իսկ աղջկանց զոյգի աւարտականին, Մարթինա Հինկիս (Չեխիացի) - Աննա Բոլնիսի (Ռուսիա) զոյգը, 6-2, 6-7 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնեց Տանիէլա Հանիթուչովա (Սլովակիա) - Արանցա Սանչէս - Վիքթորիա (Արժենտինա) զոյգը:

